

ՀԱՅՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

№ 6

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆԽԱՍԵԱՆ

Յ Ա Ն Ց Ա Ն Ք

Է Տ Ի Ի Դ

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԷԿ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶՈԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տպ. Ն. Աղանեան, Պոլից. 7

Թիֆ

Լիզ

891.99

V-15

Ընկերութեանս հրատարակութիւնները

1. Լ. Ուօլլէս. Բէն Հուր. հ. 1. Թարգմ. անգ. փ. Վարդանեան.	— 75
2. Նոյն, հ. II.	— 75
3. Շիրվանզադէ, Արտիստը.	— 25
4. Մուրացան. Գէորգ Մարգարեանի, պատմական վէպ	1— 20
5. Ժուկովսկի. Քնած արքայադուստրը, պատկերադ. հէքիաթ. փոխադր. Ա. Թ. Խնկոյեան.	— 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմածքներ	— 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ.	1— 20
8. Ն. Բուրակին. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկկենս. Դաւիթ Կօպէէրֆիլդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. Թարգմ. փ. Վարդանեան	— 75
10. Նոյն, մասն երկրորդ	— 75
11. Նոյն, մասն երրորդ	— 75
12. Շիրվանզադէ. Երկերի ժողովածու, հատ. IV 1— 50	

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1912

- № 1. Գարրիէլ Դանուցիօ. Զիօկօնդա. ողբ. 5 ար. ֆրանս. Թարգմ. Ս. Յակոբեան:
- № 2. Իլիա Ճաւաւաձէ. Մուրացկանի պատմածը. վրաց. Թարգմ. Տ. Փիլոսեան:
- № 3. Ա. Ահարոնեան. Աստծու կրակը:
- № 4—5. Իւշկէիշ. Թագաւոր. ողբ. Թարգմ. Յ. Յովհաննիսեան:
- № 6. Յ. Մալխասեան. Յանցանքը:
- № 7. Սէյրի. Ծիլ ու Ծաղիկ:
- № 8—9. Կոմս Ա. Կ. Տօլստոյ. Իօանն Ահելի մահը. ողբ. 5 ար., ողբ. Թարգմ. Տ. Յովհաննիսեան:
- № 10. Անտոն Զեխով. Պատմածքներ. ողբ. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:
- № 11-12. Ա. Ս. Գրիբաեդով, Խելքից պատուհաս, կոմ. չորս գործ. ոտանաւորով. Թարգմ. Լ. Մանուէլեանի:

1913

- № 13. Լորդ Բայրօն. Մանֆրէդ. Անգլիերէն բնագրից Թարգմանեց Տիրայր վարդ.
- № 14. Գիւլի-Մոպսան. I Ճարպագունդը, II Զարդ. ֆրանս. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:
- № 15. Վ. Վալադեան. Բժիշկը. զրամա 3 գործ. ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ՀԱՄԱՐԸ 15 Կ.

891.99

Մ-15

6 NOV 2011



ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Յ Ա Ն Ց Ա Ն Ք

Է Տ Ի Ի Դ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլէկտրասպ. օր. Ն. Աղանեանի, Պօլից. 7.

1913

4072.84

ժամանակ, երբ Գարանը ինքը կը վերանայ այս աշխարհից:

Այդ նոր միտքը իր սուր թափով աւելի զօրեղ կերպով ցնցեց նրան, պրծեց հանձնադրամ դարձրից: Այդ ժամանակ Գարանի որովայնի պտուղը թուաց նրան իր ամենաոխերիմ, ամենակատաղի թշնամին, որ իբրև զալարուած օձ բռնեց դրան, նստած էր այնպիսի յատկապէս նրա համար, որ նրան արար աշխարհում խայտառակէր, ամօթից սպանէր: Գարանը կատաղութիւնից երկու ձեռով բռնեց որովայնը, որքան ոյժ ունէր՝ սկսեց սնդմել ու ճնշել, աշխատելով այդպիսով խեղդել-սպանել այնտեղ թաք կացած թշնամուն:

Նա այդ բոպէին մտածեց, որ մինչև այդ շատ անգամ էր յղացել, մի քանի հրդի էր բերել, սակայն ոչ մի որդու սկզբնաւորութիւնը այնպէս սպանիչ չէր եղել, փնչալէս այժմ ընդհակառակը ամեն անգամ երբ մանուկը սկզբնաւորուել էր նրա արգանդում՝ նրա սիրտը լցուել էր մի նոր բերեքանքով, որ էլի մի նոր գնակ է ունենալու, թերևս, մի գիտէ, արու... մնուցանելու: մեծացնելու է նրան, իր օջախը շէնացնելու... իսկ այժմ այժմ այդ զաւակը ամենին չէր նրամանում առաջիններին: կարծես այդ նոր զաւակը նրա հարազատը, նրա արիւնիցը չլինէր, այլ մի օտարի, թշնամու, որ, հակառակ իր կամքին, եկել բոյն էր դրել այնտեղ անսպասակով, որ գիւղի մէջ ամօթի ու խայտառակութեան բաժին դարձնէ իրեն...

«Ախ, Տէր Աստուած, ինչ անեմ ես, մեր գնամ ես»... Նա մտածում էր էլի դիմել Սարգսին. բայց ի՞նչ անէր. չէ՞ որ Սարգսին պահանջ իր ասելուն էլ գիտէր, որ Գարանը մի քանի ամսից պայլ է դառնալու. ի՞նչ միթէ մի աւելորդ անգամ ևս ասելով փրկած պիտի լինէր իրեն այդ խայտառակութիւնից. միթէ այս ան-

գամ էլ Սարգսին դարձեալ անողորմ խօսքերով խուսփելու չէր օգնութեան հասնելուց, որ իրեն ազատած լինէր խայտառակութեան մասն ունենալուց, և վերջապէս, միթէ Գարանը միայն այժմ է ասում Սարգսին այդ ամենը: չէ՞ որ այդ բոլորը նա ասում էր դեռ այն ժամանակ, երբ տակաւին ոչինչ չկար նրանց մէջ, երբ դեռ նոր էր մեռել Գարանի ամուսինը, որ Սարգսին եկաւ իբրև ամօթիկ դրացի, օգնեց թաղմանը, պալա այնպէս ետև սկսեց յաճախել իրեն, և՛ կամաց կամաց յայտնել իր համակրանքը, մտերմութիւնը, վերջապէս սէրը: Եւ այդ օրերն էր, որ նրանց մէջ սկսուեց մի բարոյական, անհաւասար, բայց մէկգմէկու ձգող կռիւ. մի կողմից խնդիրը, միւս կողմից մեծօրում մի կողմից հետեւել, միւս կողմից խրաւարիւ. մի կողմից խոստում, միւս կողմից հրաժարում, մի կողմից արուփական սէր, միւս կողմից ամօթի երկիւղ, մի կողմից առնական կորոնկ, միւս կողմից կանացի թուութիւն... Եւ վերջապէս Գարանը յիշեց այն օրը, երբ առաջին անգամ Սարգսի հրատապ շրթունքները հպուեցին իր ջերմ այտերին և նրա դժեղ բալունները գրկեցին իր կանացի փափուկ մէջքը... Եւ նա... ընկճուեց, յենուեց, ու... հնազանդեց... և որքան քաղցր էր այդ առաջին հանդիպումը, որքան երազական... նրանով արած էր արդէն առաջին քայլը, այլ ևս ոչ մի բան չէր խանգարում անելու. երկրորդը, երրորդը, մինչև որ կը քամէին երջանկութեան բաժակի վերջին կաթիլը: Ամօթի գգուշութեան, երկիւղի, պարկեշտութեան, ընդունուած կարգերի պահպանութեան պատուարն արդէն վերացել էր. այլ ևս ոչ մի բան չէր բաժանում Գարանին Սարգսից: Նրանք արդէն դառել էին ամենասիրելի և ամենամօտիկ բարեկամներ. և եթէ պատահում էր, որ Սարգսին երբեմն չէր գալիս, կամ ու-

շառում էր, Գարանին ինքն էր հարցնում, վիստրոլում նաև
բանաստեղծական գրքեր, արվեստի մեթոդներ, դեռ այսօր
դեռ Գարանյան օրերը, կապոյտ երկիրն, սիրողն ծաղիկ
ներ, մարմանդ դալար, հրեհող աստղեր, քնքշան աղ-
բիւրներ, ազատ գիւղերը, դաշտային աշխատանքի
պատճառով, բոլոր գիւղացիները համարեալ հանդուսն
էին, սիրելի որջան կուզես, սիրելի անվերջ, անծայր,
սիրելի աներկիւղ, խանգարող չկայ, նկատող չկայ... և
Գարանի ու Սարգսի տեսակցութիւնները քաղցր էին,
ժամերն էրջանիկ, համըրյունը ալրոյ, գրկախառնու-
թիւնները երազական... դա մի կեանք էր, մի նոր
վերակսող կեանք երկսի համար էլ որ նախկինից ան-
նկելի կենսունակ էր, աւելի կատաղի... և նրանք խը-
միւմ էին սիրոյ քաղցր ընթակները... ու՛մայր յաւեր-
ժական սիրոյ օրերն էր, որ մէկ օր Գարանը, յան-
կարծ նկատեց մայր դառնալով Խաչին նշանը... Սա-
փորով սառը ջուրը կարծեալ վերեկից անցին նրա գը-
խին, անա կանգնած տեղում մնաց, ընդարմացած, ցը-
նորոճածի նման սկսեց տան մէջ ման գալ, մոլորուած,
մտադրաւ շարունակ պահ տեղով, ուր մկզնապարուկ
էր նրա դաւակը... և նրա մտքում ծնունդ առաւ մի
պատկեր, ձեռնդէտէ ածող աւելացող յուսահատութիւնը, կա-
տարիապէս տիրեց Գարանին, նա լաւագուէր, լիք էր
է նշանակում գիւղի մէջ ալրի կնիկ-մարդու յղանակը,
որդի ունենալը, այն էլ ձմեռուայ օրերին, երբ վնիկ-
մարդու համար չկայ ոչ մի գաղտնի անկիւն, ծածկուե-
լու ոչ մի թաքուն տեղ, երբ բոլոր տղամարդիկ գիւ-
ղումն էին, երբ դժուար է որովայնի մէջ եղած գաղտ-
նիքն անգամ թաքցնել, ուր մնաց որդե՛ծնութիւնը, որ
տեղի է ունենալու այն ժամանակ... Ապա լիքն անէր,
որտեղ ծածկուէր, դարձեալ Սարգսն էր, նրա յոյսը

ճարձու՝ ճամբարայրոյց խողովը, որ չայնքան խորատունկեր
էր անում, հանգստացնում, յուսադրում։ — Եւ որ ասի
— Եկաւ վերջապէս Սարգիսը։ — Եւ ասի — Եկաւ
— Գարանը վարձեալ առաւ ինքեմ, միանգամից՝ չորս
յայտնելու յորինքը, մայր դռնն անուշադէպ շնչա-
կատելէ։ — Եւ ասի — Եկաւ վերապահեց։ — Եւ ասի — Եկաւ
վերջապէս Սարգիս, գիտեմ ինչեւայ։ — Եւ ասի — Եկաւ
— Զէ, ինչեւ ինքեմ ինքեմ ինքեմ ինքեմ ինքեմ ինքեմ
— Ինչ կը լինի, երբ մի տղամարդու կնիկ մարդ
երար հետ երկու երեք ամիս կսիրողին։ — Եւ ասի — Եկաւ
— Սարգիս միայն կարողացաւ արեւ Գարանը բերել
ճնշուած, կէս վշտալի, կէս... ըստորում կատարած
յանցանքն էլ կէս էր, կէսը իրենը, կէսը Սարգիսինը։
— Սարգիսը, որ ամեն օր սպասում էր մի անդա-
սակ լուրի, քիչ լռեց, ապա՝ գրեթէ անտարբեր անաց-
— է, հիմա ինչ միտք անելու բան կայ մի քան
արեւ, վերջացրո՞ւ, գնա՛յ։ — Եւ ասի — Եկաւ վերջապէս
— Ինչ անեմ։ — Եւ ասի — Եկաւ վերջապէս Սարգիսը
— Զգիտեմ ինչ, հնարներ ջանալու պատահեա-
նանց հարցրու, նրանք քեզ կասեն։ — Եւ ասի — Եկաւ
— Ինչ հարցրուես, ես, ես, ես չեմ կարող, կը հաս-
կանաս, չեմ կարող։ — Եւ ասի — Եկաւ վերջապէս
— Ի՞նչ, ես հարցնեմ, գիտե՞լ ես, ինչ եմ թէ
լեւադ խոտ ես կերել, — Գարանի երեսին, խոտո՞ւնայեց
Սարգիսը, — հարցնեմ, որ համ ես խայտառակում, համ
դու։ — Եւ ասի — Եկաւ վերջապէս Սարգիսը
— Հապա՛ւս հարցնեմ, այն էլ պառաւ կանանց,
որ իմանան դեղն ինձ համար լինելը՝ ամբողջ գիւղի
մէջ խայտառակեմ. դու ի՞նչ հարցնես, չեմ իմանայ, թէ
ու՛մ համար։ — Եւ ասի — Եկաւ վերջապէս Սարգիսը
— Զէ, ես չեմ կարող. դա տղամարդու գործ է,

դա քո գործդ է, — խիստ կերպով շեշտեց Սարգիսը, ելաւ դուրս։

Գարանը ճնշուած սրտով նայեց Սարգսի ետեկից, նայեց և անաւ, թէ ինչպէս անհոյժ վերադառնալով թողեց ու հեռացաւ նա, ամենեին ցաւակից համարելով իրեն։ Գարանի սրտի ծայրը մըմռաց, դառն հիասթափուած թիւնը վայրկենապէս տիրեց նրան, նա այդ րոպէին զգաց, թէ ինչպէս խաբուած է եղել ինքը, ինչպէս սըխալուած, իր կեանքը կործանած... զգաց իր մենակութիւնը իր սարվշտի առջև, զգաց, ու երկու ձեռքով ծնկներին պինդ խփելով ընկաւ բարձին, երեսն առաւ ձեռքերի մէջ սկսեց լալ-լալ...

Սարգիսը, որին նա այնպէս բուռն կերպով սիրում էր, և որին հաւատացած էր, թէ իր նեղ օրին սարի պէս կանգնած կը լինի այժմ նա թողնում հեռանում էր...

Անցաւ էլի մի քանի օր, Սարգիսը չկար. Գարանը պահանջ էր զգում նրան դարձեալ տեսնելու, սակայն նա պարզ չգիտէր ի՞նչ էր իր տեսնելու պահանջը. կռիւ, որ նա մտքում դրել էր, թէ իր սիրտին փառք նրա մէջ գտնելը... Ահա նորից եկաւ Սարգիսը, աղուխի մէջ տանձ ու խնձոր դրած, սակայն նրա գալը Գարանի վշտին օգնելու համար չէր, այլ... և Սարգիսը երբեք Գարանին այնպէս զգուելի, այնպէս ատելի չէր թուացել, ինչպէս այդ օրը, այդ րոպէին, երբ նա իր ծանր ցաւովն էր տանջուում, իսկ Սարգիսը իր...

— Որ էդպէս է, գնա իմ քովէն, գնա։

— Լաւ, որ կ'սես, կերթամ։

— Ապա ի՞նչ անեմ, քանի որ...

— Ի՞նչ. մի բան ձեռքէս եկաւ՝ չարի, որ կը վռնդես։

— Հապա ես ի՞նչ անեմ, մէր գնամ։

— Թէ կարող եմ, չեմ անէ՝ ասա, — բարկացկոտ

Գարանի երեսին նայեց Սարգիսը. թէ չէ, ի՞նչ հոգիս կը անես։

— Ախր ես, — հեծկտաց Գարանը և ձայնը խեղդեց. կոկորդում։

— Դու ի՞նչ։

— Եզակրտանջում եմ, է, մի քանի ամսէն երկուսն աշխարհ է գալու թակ դու...

— Ասա, ի՞նչ անեմ, թէ փողի բան է, ահա ու հանեց քսակից մի հատ ուռը իրանոց, — թէ չէ, ի՞նչ ես հոգիս կ'աւել...

— Ինչո՞ւ ինձի էս օրը գցիր։

— Էհ, ես քո գլուխը չունիմ, քեզ կ'սես, — թէ լաց ու արտասուքի փոխարէն պառաւ կնիկ-մարդոց հարցրու՝ կ'սես, դու էլի գահլա կ'տանիս, — ու վերկենալով տեղից Սարգիսը երկու քայլ արեց դէպի դուռը։

— Զէ, չէ, մի գնա, — մտածմունքների խառնաշփոթութեան մէջ ինքն իրեն կորցրած ձայնեց Գարանը։

— Ախր ես էլ մարդ եմ, ի՞նչ ամեն գալուս լաց ու շիւանդ կ'ընես։

— Էլ չեմ, էլ չեմ, մի բարկանայ, — աղերասնքով հեկեկաց Գարանը և լացը խեղդեց կոկորդի մէջ։

— Դու կ'արձուսես ես, թէ ես չեմ մտածէ, չեմ ցաւի քեզ վրայ, բայց ի՞նչ անեմ, որ ձեռքէս մի բան չի գայ, որ անեմ...

— Գիտեմ, գիտեմ, համա, ես էլ ի՞նչ անեմ, քանի որ ամեն բան արի, ոչինչ ճար չկ'աւ։

— Դու չունի ընկնեմ, ախ, ախ, — հառաչում էր Գարանը և ընկնում Սարգսի կրծքին։

Սարգիսը հրատապ շրթունքները մօտեցնում էր նրա տաք կարմիր խոտերին...

... և... Գարանը դարձեալ լուռ ու մունջ տանդւում էր Սարգսի համար քաղցր րոպէները և այլ և չէր շարունակում իր վշտի

մասին խոսել, քաջ գիտենանով, որ ոչինչ ծագել էր ինչ-որ
չլինելուց զատ պետք է յարուցանէր նրա զայրոյթը,
և քիմայն լիւեիանյա արտապետութիւն, և փաթաթուելով
Սարգսի վզով՝ երկիւղած շնչում. «Ախ, Աստուծո՛ւ ջան,
ի՞նչ պիտի անեմ ես...»

Թամանակի ընթացքում մայր դառնալու նշանն
երևալու ծանր տպաւորութիւնները թէև տակաւ տակաւ
տակաւ թռչեցել էին սակայն Գարանին տանող ծա-
նրը միտքը սև ոտնակախիւ ման չէր հեղանում նրա-
նից, շարունակ իր սառն դէմքը ցոյց էր տալիս անբա-
նալի սլաքի պէս ծակում նրա սիրտն ու հոգեւորը. և
այդ ծանր միտքը ներքեւ քնքրան տոկալի, այնքան
տալանիչ՝ չէր թուացել, ինչպէս այդ գիշեր այդ փա-
մին, երբ մանուկն առաջին անգամ փաղաքանալով
տակաւ կարծես Գարանի ոտքերի տակ գետինը շարժուեց
և սարսափը վերեւից տրոտացաւ նրա գլխին. Յն մթու-
թեան մէջ ուղեքերը խոտոտ ընցնեց, կարծես անշիջա-
լով այնտեղ մի բան գտնել, ու բազումները տարածեց
աջ ու ձախ. նա տեսաւ, որ իր սիրտը բոլորքը մուծն է,
թանձր մութ, ու ինքն այդ մթութեան մէջ միայնակ
պառկած իր սկզբնորոշ տան միւս անկիւնում հանգիստ
քնելին, որ իր ծանր քնքրան տոկալով ու քնքրան
Քալանը փախաւ Գարանի աչքերից. նա ուղղեց
գլուխը դէպի վեր, նայեց բաց երդիկին, որտեղից հա-
զիւ երևում էր աշնանային գորշ երկնքի փոքրիկ պը-
տորը, որ վերեւից ներքեւ մաղած աղբիւր կաթիլների
հետ կարծես վշտի կաթիլներ էր ներս մաղում...

Մի րոպէ Գարանին քաղաքալի թուացաւ այդ տա-
րտառային միայնակութիւնը, տակաւ միևնոյն փախա-
նակ այդ միայնակութիւնը թուացաւ նրան և ցանկալի,
քանի որ այդ թանձր խաւարի մէջ ոչ ոք նրա տեսնող
ու չկատող չկար. և որքան լնակը վիշեքի ծրայդ տար-

տարոս դուրսիւնը տէր օրեր, շաբաթներ, նոյն իսկ
ամիսներ, մինչև որ նրա որովայնի մէջ գալարուած կեն-
դանի նախատինքը մարդկային աչքերից հեռու կրնա-
նէր, կը մեծանար, բոլորից փածուէ աշնան վերջար, և
բոլորից էլ ծածուկ խկոյն անհետ կը լողոյն. և նա
էլ կը ինչ-որ այն առաջնայն ամիսին արեւի Գարանը,
այն պառնուաւոր նամուսաւոր գեղջիկուհի, այն անբիծ
մայրը... Օ՛հ, որպիսի երջանկութիւն... ու մի րոպէ
պատրանքը տիրեց Գարանին՝ գրկեց, տարաւ նրան
դէպի ցնորակն աշխարհ սակայն այդ պատրանքը ծր-
կար չըտնեց, վայրկենապէս տեղի տուեց դառն իրա-
կանութեան, մեր քրորդ անգամ մանուկը խաղացաւ նրա
քրտի տակ. Այս անգամ արեւն ուղեգիրն խփեց Գարա-
նի գլուխը. նրա սիրտը սկսեց ճնշուել, և կոկորդի
մէջ զգաց ցած նրա կուրծքը կամաց-կամաց ուռնա-
նալով սկսեց բարձրանալ իջնել, և այնտեղ ամիսներով
կուտակուած վիշտը յանկարծ փուլ եկաւ և հեծկտան-
քի հետ դուրս ժայթքեց ու արտասուքով ողորեց նրա
երեսն ու քարձը. և այդ պահին իր սիրտը կը լող-
տայ Գարանն այդ րոպէին զգում էր իրեն փնչալէս անօդ-
նական միջակ, որսկանի ձեռն ընկած մի վիրաւոր
եղնիկ, որ ոչ մի կարեկից ու արտակից չունենալով
մոռում է մահո՛ւն, ճիրաններով սոսկալի տանջանքներ
կրելից անդա շնորհակալ լով փնչի իր իրաւունքին
ու իր աչքերից հոսած յորդ արտասուքը կամաց-կամաց
հանգչում ցրեց, վշտերից աշրուող նրա հոգեւորը, նրա
թուլացած մարմինը հանգարտեց մի տեսակ թմրու-
թեամբ, աչքերի թերթիկներն իրենք իրենց վրայ հ-
կամ կամեն ինչ խառնուեց ու կորաւ մթութեան ցը-
նորքներէ մէջ. և այդ պահին իր սիրտը կը լող-
տայ Գարանն այդ րոպէին զգում էր իրեն փնչալէս անօդ-
նական միջակ, որսկանի ձեռն ընկած մի վիրաւոր
եղնիկ, որ ոչ մի կարեկից ու արտակից չունենալով
մոռում է մահո՛ւն, ճիրաններով սոսկալի տանջանքներ
կրելից անդա շնորհակալ լով փնչի իր իրաւունքին

II.

Ծէգեց: Գարանը պառկած տեղից՝ աչքերը բաց արեց և նայեց՝ նեղլիկ երգիկին, որ տեղից երևում էր աշնանային արդէն պարզած երկինքը:

Գիշերուայ մի քանի ժամուայ քունը թէև քիչ կազդուրել էր նրան, վիշտն առ ժամանակ՝ մոռացնել տուել, սակայն Գարանն երբ յիշեց ամբողջ գիշերուայ անցածը՝ ամեն ինչ դարձեալ տակն ու վրայ եղաւ նրա մէջ, և նա դարձեալ պաշարուեց ծանր խոհերով: Երբ նա ուզում էր տեղից վեր կենալ՝ կարծես մէկն այդ բոլորէն նրա ակնշիւն ասում էր՝ ինչո՞ւ համար ես վեր կենում, խղճուկ: Ել ինչ լաւ բան է սպասում քեզ այն աշխարհում: ապագայի էլ ինչ յոյս կեանքի էլ ինչ ակնկալութիւն:

Բայց հարկաւոր էր վեր կենալ թոնդիրը վառել, խմորը հունցել, որ մայրը գար հացը թխէր: հարկաւոր էր կերակուր պատրաստել, որդոց և իր տեղաշորը հաւաքել: այդ օրը լուացք անել, քուն-դուն ապւել-յիստկել: Գարանը թառամած սրտով վեր կացաւ տեղից, շորերը հագաւ, գոգնոցը վերցրեց և ուզեց գօտին կապել: այդ բոլորէն նա պարզ նկատեց, թէ որքան հաստացել էր ինքը: Ահ, մի խուլ թառանչ արձակեց նա և տաքութեան մի ուժգին ալիք տուեց նրա երեսը: նա կանգնած տեղում մտամոլոր կապեց գոգնոցի կապերը, սարքեց գլուխը, մօտեցաւ որդոց տեղաշորերին:

—Վեր կացէք: լուս է, կալի ժամանակ է: Որդիքը, որոնցից մեծը՝ Մարուքը կըլինէր մօտ 19 տարեկան, փոքրը՝ Տիգրանը մօտ 12, տեղաշորերում մի-մի ծոյլ պտոյտ գործելուց յետոյ թևերը ձգեցին աջ ու ձախ, մի-մի անգամ խորը շունչ քաշեցին, բերանները մեծ

լաց արած՝ յօրանջեցին, ապա նստելով տեղաշորերի վրայ սկսեցին դանդաղ և անփոյթ հագնուել:

Գարանը տեսնելով որդոց անհոգ և անփոյթ շարժումները՝ մի մաշող նախանձ զգաց, թէ ինչո՞ւ ինքն էլ նոյնպէս խաղաղ և հանգիստ չէր, ինչպէս նրանք:

Որդիքը հագնուեցին, տրեխները ոտքերը քաշեցին, վեր կացան, երեսներին մի-մի բռնուցուրտ ջուր պոկեցին, իբր թէ լուացեցին, փեշերով ձեռքերը, երեսները սրբեցին և ուղղուեցին դէպի կալ:

Այդ օրը Գարանը լուացք ունէր: նախընթաց երեկոյից նա արդէն իմաց էր տուել մօրը, որ գար իր եփին ու թափին նայէր, հացը թխէր, որպէս զի ինքը լուացքը անէր:

Եկաւ մայրը: Մինչ այդ Գարանն արդէն խմորը հունցել, կովերը կթել, թոնդիրը վառել, կերակուրը վրայ էր դրել:

Մայրը կապեց կեղտոտ գոգնոցը, թևնոցներն՝ անցկացրեց թևերը, որ կուսն առաւ դրած հետը բերել էր, նստեց թորոնի մօտ խոնչայի առաջ և ըսկանց խմորը գնդել: Այդ բոլորէն Գարանն ուզեց փոքրիկ կաթնայով ջուրը թորոնի վրայից հոտ առնել, տանել լուացքի տաշտի մօտ: նա կաթսան բռնկուս համար վեր քաշեց գոգնոցի երկու ծայրը ու այնպէս կուցաւ ջուրը վերցնելու: այդ դրութեամբ նրա մարմինը սովորականից աւելի ուռած, աւելի հաստացած երևաց մօրը: Մայրը մի երկու վայրկեան թողեց ձեռի խմորը գնդելը և կասկածանքով դառաւ:

—Աղջի, Գարան, էդ ինչ է հալդ, կըսես հաստացած ըլլիս: պսեմ գիրացել ես՝ գիրութեան բան չէ: ասեմ՝ տակից բան ես հագել՝ էն էլ չէ: էդ ինչ բան է:

—Հարցն այնքան անսպասելի էր և այնքան շեշտակի, որ Գարանը յանկարծակիի եկածի պէս տեղում

մնաց քարացած նրա ձեռքերը վայրկենապես թուլացան, կաթնաճաճ ընկած գետին, միջի ջուրը մի-երկու անգամ աջ ու ձախ ալիք տուեց ու ափերից դուրս թափուեց։ Նա մնաց տեղում արձանացած և չըզիտէր ինչ պատահանէր մօրը։ Յուզմունքը վայրկենապես տիրեց նրան, լեզուն պապանձուեց, նրա բերանում և նա անկարող լինելով պատասխան տալ մօրը՝ ամբողջ մարմնով ցնցուեց և յանկարծ նկսեց հեկեկալ։

Մայրը արձանացած տեղից դիտելով աղջկայ հեծկտանքը դառանքով հարցրեց՝
— Ի՞նչ պատահեց։

— Ախ, մայր իմ, մայր իմ, — ախ՛ անգամ բարձր հեկեկաց Գարանը և ընկաւ կողքին դրած աղի ծապին։

— Մայրը որ մինչ այդ արդէն հասկացել էր աղջկայ լացի պատճառը՝ այդ ըուպէին լիովին համոզեց, որ սխալ չէ իր կանխածը։ Նրա մէջ միանշանակ և անսկիւր խօսել կարեկցութիւնն ու բարկութիւնը և նա մի քանի րոպէ անորոշ դրութեան մէջ մնացած չըզիտէր ինչ անէր, բարկանման հայոյէր, անիծէր, թէ խղճար, օգնէր, կարեկցէր։ Նա իր փոս ընկած աչքերը չափ տարօրինակ արտայայտութեամբ, մի քանի րոպէ նայեց աղջկան և տեսաւ, թէ ինչպէս սաստիկ լացից նրա ունեւրն ելնում-իջնում էին և ինչպէս անվերջ հեկեկում ու հեծկտում էր նա և չէր կարողանում հանգստանալ գէթ երկու խօսք արելու։ Հարազատ գաւակի այդ սրտամորմոք դրութիւնը մեղմացրեց վրդովուած մօր սիրտը և նա լցուելով մայրական գորովով ու կնոջ յոտուէր օգնելու լի խանդաղատանքով վեր կացաւ տեղից, մօտեցաւ Գարանին, գրկեց նրա գլուխը և մեղմ կերպով փայփայեց։

— Ախ, մայր իմ, մայր իմ,

— Ի՞նչ ես բերել գլուխդ, որդի։
— Խաբուեցի, մայրիկ ջան, խաբուեցի։
— Ձագէ՛լ հարս էիր ի՞նչ է, որ խաբուեցիր, երեսուն, երեսուն տոհմ հինգ տարեկան կնիկ մարդ ետևըրդ։
— Ամբողջ գիշերը տանջուեցիմ, աչքերս փակի չեմ փակել, լացով շարունակեց Գարանը։

— Վաղուց էստեղ ինչպէս օգնելու փորձեցի։
— Հինգ ամիս կը լինի, որ փորձեցի։
— Ինչպէ՞ս մինչև հիմա ինձի ոչինչ չէիր ասել։
— Կը վախենայիս կամայէ՛ր, հագիւ լսելի չայնով հեկեկաց Գարանը։


— Ինչ կանչէինք, կը փչացնէինք։
— Արի, ինքս արի, շատ բան արի, նորից հեծկըլ տաց Գարանը, բայց ոչինչ չօգնեց։

— Հոգևորութիւնդ է՞նչ։
Երէկ գիշեր խաղաց, դողդողալով ցածր շնչաց Գարանը։

— Մայրն երբ իմացաւ երեսայի շնչաւորութիւնը՝ յանկարծ մի կատաղի կիրք, մի անզուսպ բարկութիւն դպաց դէպի աղջիկը, և դէն հրելով իր քմից աղջկան կանչեց։

— Վայ ծամդ կտրուի, կնիկ, վույ ոչ ու կիւն ըլլէիր աղջիկ, վույ փորիս մէջ ջուր դառնայիր, կաշխարք չըգայիր, Գարան, որ էդ խայտառակութիւնը, գլուխս չըբերէիր... ու մի դառն, թունալի հայեացքով նայեց աղջկայ երեսին։ Հիմա ի՞նչ է ասելու խալիք, ի՞նչ է լսուելու գեղի մեծնու պատիկը, բոլորի բերանի փութեք ես դառնալու, ամենքի ծամելու մաստակը։

— Ախ, մայրիկ ջան, մայրիկ, մենակ յոյսս դու էիր, թէ դու ինձ կը մխիթարէիր, կօզնէիր։ Դու էլ որ էդպէս կը խօսիս։ Ինչ անեմ, մեր գնամ, մեր ջուրն ընկնիմ։



9072 89

--Խաբէց, խաբէց...

Գարամննայդ բուպէին արտասուքների միջից դիտում էր մօրը և տեսնում էր թէ ինչպէս այդ փոքրիկ, կոացած, կուչ հկած, մաշուած, մօտ վաթսոն տարեկան սեռ նիհար կինը, կանգնած տեղում դռնացի, մեծացել կասեա մի հսկայ էր դառել. նրա փոսընկած աչքերը մի նոր թափով սկսել էին ըսելի մէջ հրերալ, ցամաքած կուրծքը՝ ելնել-իջնել և նիհար գունատ ջրթուներնրը կարմրել-դողդողալ... Գարամնն եր-

— Ի՞նչ է եղել, պսակուլի պիտի։
 — Չէ. դու էլ ի՞նչ պսակ։
 — Հապա տան վրայ մարդ պիտի բերէ։
 — Դու էլ... Երկու-երկու հասած մանչ ունի՝ տան վրայ մարդ բերել կըլլի։
 — Հապա ի՞նչ է։
 — Չգիտեմ ի՞նչ։
 — Չէ, չգիտեմ։
 — Սաղ գեղը կը խօսի։
 — Ի՞նչ է։
 — Աղջիկ, դու էլ ի՞նչ բեխաբար ես եղի։
 — Դէ ասա, որ բեխաբար չըլլիմ։
 — Չէ, չեմ ասէ, էգուց իմանան՝ ինձի պիտի մեղադրեն. արթող պիտի բամբասեն, թէ խօսքը ինձէն է դուրս ելել. ես էդ տեսակ բանէ զգոյշ եմ. ուրիշէն իմացիր։
 — Էհ, դու էլ, Տուտո ապլա, կասես գնալու ասելու եմ, թէ Տուտոն ինձ ասաց։
 — Չեմ ասէ, որ ինձէն ես իմացել։
 — Չէ։
 — Երգում կեր։
 — Էն Աստու անունը։
 Տուտոն այդ խօսքի վրայ գլուխը տարաւ բերեց, աչքերը բնեղ մէջ խաղացրեց ու հրճուող արտայայտութեամբ դառաւ.
 — Երկու հոգևորուել է։
 — Ի՞նչ կասես, — սարսափահար այդ տեսակ մի անսպասելի լուրից կանչեց Ուղափր։
 — Հա, ղորթ, — նրան հաւատարացրեց Տուտոն և չարախինդ ժպիտը երեսին՝ գլուխը մի երկու անգամ վար ու վեր ձօճացրեց։
 — Գուցէ էրկանէն է։

— Դու էլ... էրկայ մեռնիլը ութը-ինը ամիս է, իսկ աղէն էս երկօրս է հոգևորուել։
 — Գուցէ սուտ է։
 — Սուտ, հեգնեց Տուտոն, — լաւ սուտ է, փորը ելել բերնին դէմ է առել՝ սուտ է...
 Այդ ըսպէին բամբասող կանանց մօտեցան մի քանի, զանազան հասակի, զեղջկուհիներ։
 — Ճամբու մէջ տեղը կանգնել էք ի՞նչ կը խօսէք, — հարցրեց նրանցից առաջին մօտեցողը։
 — Հէ՛հ, Մանասնեց Գարանի բանը կը պատմենք, իբրև թէ ոչինչ բանի մասին է արած խօսակցութիւնը՝ յարեց Տուտոն։
 — Հա, ղորթ որ, էդ ի՞նչ մեղքանալու բան է եղել, — կարեկցօրէն խօսեց երկրորդ մօտեցողը, — հիմի ի՞նչ պիտի անէ խեղճ կինը։
 Տուտոն երբ լսեց, որ գիւղի մէջ իրանց զատ այդ դաղտնիքը մի ուրիշը ես գիտէ՞ր՝ սաստիկ վրդուվուեց. նա մի բարկացկոտ դսպած թառանչ արձակեց, սակայն վրայից ոչինչ ցոյց չը տուեց, թէ բարկանալը դրա առթիւ է, խօսեց։
 — Հիմի իմացա՞ր, Ուղափր, որ քեզ ասացի, թէ սաղ գիւղը գիտէ։
 — Քա էդ ի՞նչ է եղել, — մի քանի կանայք հարցրին միասին, որոնք տակաւին չը գիտէին Գարանի գլխին եկած փորձանքը։
 — Չգիտեմ, կասեն, թէ երկու հոգևորուել է, — նորից խօսեց Տուտոն։
 — Ի՞նչ կասէ, խեղճ կինիկ, ղորթ որ մեղքանալու է, — այլայլուած ձայնեցին մի քանիսը։
 — Հէ՛հ էլ մեղքանալու չէ, — իսկոյն յարեց մի ուրիշը, — թող չանէ, թող չըքաշէ։
 — Աղջիկ, աղջիկ, էդպէս մեծ-մեծ մի խօսի. փոր-

ձանք է, պատանէն որ մարդու գլխիւն բերէ կը բերէ:
— Դու էլ, — մէջ մտաւ երկրորդ մտայնողը, — ոչ
փորձանք, ոչ բան, մարդս իրեն պահել չի տի
նայ. չէր կարող իրեն պահել, թող մարդու գնար, էն-
քան ուզող կար:

— Դնար, համա տղիցը ուժ, թողնէր:
— Էն ժամանակ երբ, աղբը չէր ուզէ, թողնել
թող էր բանը չանէր. հիւ է մեղաւոր, տղէն ինքն էլ
պատիկ չէին, որ առանց մօր, չմնային մեծն արդէն
նշանուելու տղայ է: Ինչպէս որ արեւ է, թող էնպէս
էլ քայլէ: Վրայ բերեց առաջին մտայնողը:

— Աղջի, մէրս, քուրս, գեղի մէջ հիւ էր անպէս եղ-
տեակ բան, հիւ էր ամացել, որ որբակայրի կնիկ-մարդը
տղայ ունենար. ամօթ ու խայտառակութիւն է: Դրա
համար հացը եսեան (հոտիտն), մենք ձիաւոր ետեւէն
չենք կախայ հասնիւ, — թունաւոր տոնով խօսեց Տուտօն:
— Էդ տեսակ անամուկ, կնիկ-մարդուն պիտի
բռնես աղ սաղ գլխովէր գետնէ մէջ, — թաղես: Վրայ
բերին մի կրկնէ կին միասին:

— Գարանը որ ապուռ ունենայ, կերթայ իրեն ճո-
րի քեջէն վեր կըցընէ, կըպրծի, անելացրեց մի կարճա-
հասակ, դունչ ու երեսը եղմայով փաթաթած նորա-
տի կին, որպէսզի ինքն էլ բանի մէջ երկար ինքն էլ
մի բան ասած լինէր:

— Դէ, դուք էլ հերիք էղպէս անխղճ խօսիք:
դարձեալ խօսեց երկրորդ մտայնող կինը: — մարդ է, սը-
խալուել է. ասել են «Աղամ խաբուաւ դրախտէն» ըն-
կաւ: Ինչ էղքան կախելու կանէք: Էդ որ էղքան Գա-
րանի վրայ կընեղանաք, ինչ կըլինի մի քիչ էր մեր
էրիկ-մարդուց վրայ նեղանաք, որ շնորթնէն վաղ
զան, ուրիշների կնկտանց ետեւէն չընկնին, ինչ անէ
խեղճ Գարանը, մինչի տղամարդը անասանայ չէառնար:

նա էր բանը չէր անէ. մեղքի կէտը թէ Գարանին է:
կէտն էլ էն տղամարդուն է, որ չէ խղճացել խեղճ կը-
նիկ-մարդուն, փորձանքի մէջ է գցել: Դուք մենակ Գա-
րանին կըմեղադրէք, մեր սաղ գեղը Սողոմ-Գոմոր է:
Էսօր պահուածն է գուցէ էրիկներին կաննեն, կըքա-
ժանուին, որ միտակ միտն, սրտերն ուղած մարդոց
տերն անեն: Աղբերիդ մենակ Գարանի արածը կերե-
ւայ չունքի (որովհետեւ) որբակայրի է, մարդ չունի
համա էն սահաթին քանի-քանիսը կան գեղի մէջ, որ
մարդ էլ ունեն կանեն էլ. նրանց բան չէք ասէ, չղեն-
քի մարդ ունին չունքի մարդու անուան տակ էն
կտակէ կը ծածկուի, էն որ Գարանը մարդ չունի, հո-
ղեղէն է, ցանկացել է, խաբուել է մեղքի (նիզակի)
ծէրը կը հանէք: Մեղք է մեղք. մի բան շիտակ կը
խօսին, — համոզող եղանակով իր խօսքը վերջացրեց խօ-
սող կինը և բարկացկոտ հայեացքով նայեց Տուտօնի
կնիկին:

— Շատ էլ կան, դրանից ինչ, — կըբոտ վրայ բերեց
Տուտօն, վիրաւորուելով խօսող կնիկը շնչաւի հա-
յեացքից:

— Դժբ որ... արձագանք տուին Տուտօնի մի քա-
նի գեղջիկներ:

— Տեսնին տղէն համէն է, — խօսքը փոխեց միտե-
րի կին:

— Ո՛վ գիտէ, համէն է, էնքան մարդու անուն
կոչուան:

— Ուր անունը կոչուան, — խօսքը ուժ մի կնիկ
— Թորոյնց, Սէրգոյի, Սէյլանենց Սարգսի, Սը-
մոյնց Չատիկի, ես ինչ գիտեմ, քանի մարդու անուն
կուտան, — իսկոյն վրայ բերեց Տուտօն:

— Աղջի, հա դորդ, դա Սէյլանենց Սարգսի բանը
կըլի. քոռանամ թէ էն չէ, նրա պէս չուն մարդ էս

գեղի մէջ չկայ, — խօսեց առաջին մօտեցողը, կնիկարմաղ չկայ, որ հտեէն ընկած չըլլի. թաղքի իմ հտեից էլ ընկաւ. հերու էս ժամանակ կալէն մենակ կուգամ տուն, համա մեր դռայ առաջ դէմս ելաւ... տեսայ որ ճար չկայ, ասի էնդին գնա, թէ չէ կը ճուամ, էդ որ քսեց, թողեց ու փախաւ:

— Ասենք Սանդուխի ասածը շիտակ է: Սէյլանենց Սարգիսը Գարանենց մօտիկ դրկից է. քանի հեղ տեսնող եղել է, թէ ինչպէս անժամանակ Գարանենց տնէն դուրս է եկել:

— Սէյլանենց Սարգիսն ինչի պիտի արած ըլլի, — յանկարծ յուզուած խօսեց հազմայով դունչ ու երեսը փաթաթած նորատի կինը, որի մօտաւոր ազգականն էր Սէյլանենց Սարգիսը, — դու էլ Սանդուխ, մեծ կնիկ ես, քեզէն բաներ մի հնարէ. անզգամն երթայ, ուրիշի հետ անամօթութիւն անէ՝ հիմի մեղքը բառնաք Սէյլանենց Սարգիսի վրայ: Իմ քեռիս էդ տեսակ բանի տէր չէ...

— Վույ, կացինը քարին զարկիր, Սանդուխտ, կըրակ չուտես, եղաւ... կէս կատակ, կէս լուրջ խօսեց նորատի գեղջկուհին:

— Կրտսենիք, — դարձեալ յարեց Տուտօն, — մի անամուռ ուրբեայրու պատճառով քանի մարդու անուն կըմրոտի:

— Ղորթ որ, ասել են՝ «գողը մէկ մեղքի տէր է, գողնալ տուողը՝ հազար». հիմի Գարանի արածն է. ինքը մէկի հետ ընկաւ, քանի մարդու մեղք կառնին:

— Ասէք միս կուտես, էլի, — զայրացած միջամտեց երկրորդ մօտեցող գեղջկուհին, — բամբասանք սիրողի համար ուրիշի միս ուտելը քաղցր է:

— Ո՞վ գիտէ, հիմի մէկի հետ է ընկել, թէ մի քա-

նիսի. մի կնիկ-մարդ մէկի առաջ որ իրեն դուռը մէկ բացեց, ուրիշի առաջ էլ բաց կանէ:

— Էդ տեսակ կնիկ-մարդը ծակծակի, ծակծակի դեղին ջրերը ելնին, վրայէն վազեն, — դեռ սրտի դայրոյթը չանցկացած խօսեց երեսը հազմայով փաթաթած նորատի կինը:

— Աղջի, Ղումի, Ղումի, մի ասէ, մեղք է ինքդ ազատուելու վրայ ես. մարդու էդպէս նեղ օրը լլըխըղձան, կօզնեն, չէ թէ քացիով կուտան, աւելի ցելի մէջ կը գլորեն, — նորից խօսեց երկրորդ մօտեցող գեղջկուհին:

— Օգնենք, հա, օգնենք, որ անառակութեանը փաշկարայ երես տանք, որ ուրիշներն էլ վաղը առանց ամաչելու ոռու մաթուշկայի պէս սրտերու ուզածներն անեն: Դու էլ, Տիրուն, հասակդ առած կնիկ-մարդ ես՝ դիտեմ թէ բան գիտես, — զայրոյթից տեղում համարեա պարելով խօսեց Տուտօն:

Այդ ժամանակ խօսող կանանց կծիկի մօտով անց էր կենում մի տարիքաւոր, բարձրահասակ, մեծ փափաղով գիւղացի. սա երբ նկատեց խմբուած կանանց կծիկը, մանաւանդ նրանց մէջ տեղում Տղատօն, որին նա շատ լաւ ճանաչում էր իբրեւ բամբասանք տարածող բնակորութեամբ մի անձն կոհանց, որ այդտեղ անպատճառ էլի մի խամբասանքի բան էր շինելու, մօտեցաւ, երկար ճիւղոտը օդում պտտացրեց ու քարձր ձայնով կանչեց.

— Ի՞նչ կալոց. օրով բաներդ-գործերդ թողած, ճամբու մէջ տեղը կանգնել էք, բամբասանք կանչէք, ուրիշի միս կըծամէք, իլլաքի էդ գրողի խեղդած Տուտօն. հայդէ տներդ. — անպիսի մի եղանակով «հայդէ տներդ» կանչեց նա, որ կարծես մի իշխանաւոր լինէր:

իսկ Գորդը կնկարէր յայնիս ինչի՞ ինչի, նրա խօսքի տակ չմնալու համար մըթմըթաց Տուստին։
 — Կանչի՞ր իրա՞յ, կանանցից մի երկուքը խնդոյն հեռացան, իսկ մնացածները կամաց-կամաց ցրուեցին իրենց տները։
 Ամենից ուշ հեռացողն եղաւ զորնէ ու երեսը կողմաւոր վաթաթած նորաստի վինը, որ Տուստի աչքերէ մէջ նայելով շեշտեց.
 — Իէ, գիտես, Տուստո՞ւս, իմ քեռիս էդ տեսակ մարդ չէ։ Եւ լինի թէ, էսդին էնդին երթաս, վրէժ բան խօսիս։

— Ես գիտեմ, որ Կարապետը իմ քեռիսն է։
 Կարապետը ցրտի լի մը խօսեց. IV.
 — Այն քուրը շրջող լուրերը, ու բամբասանքները, որ տեղի ունէին գիւղում, հասնում էին Գարանի աշխարհին իր մօտիկ ազգականների մէջըցով։ Հասնում էին Երանչակի քիւղացած երկաթ խորում ծակում էին նրա ուղեղն ու սիրտը։ Գարանը չորագմուքեց, մինչև կատաղութեան էր հասնում, որ գեղով մէջ օր լաւութեան և լաւելի փութում էր նրա անդամները ինչն ու ինչն անէր։ Երանչակի քիւղում մնում էր կանգնած մտածելիս, քիւղում աշխարհի հեղ խորհելիս, սակայն ոչինչ գրաւեան հետեանքի չհասնելով, այդ խորհելից ընդհակառակը տեսնում էր, որ մտադանջութիւնից օրըստօրէ իր երեսի գոյնը գնում է, աչքը նիհարում, ինքն իրեն վատաբողջ զգում, մինչդեռ այդ մտադանջութիւնը մազի չափ անգամ չէր թողնում արգանդում եղած մանրէի վրայ, ընդհակառակը՝ նա օրըստօրէ աւելի և աւելի ածում էր ու պահում։
 Յուսահատութեան պատճառով ընդհանրապէս Գարանը չատ անգամ մտածում էր ինքնասպանութեան մասին,

եթէ թոյն լինէր՝ նա պատրաստ էր ընդունելու, սակայն թոյն չկար. նա մինչև անգամ զիզի ծախող փերեղակին հարցրեց՝ արդե՞ք քիչ թոյն չի՞ կարող ճարել, կամ մօտը ճուռի մէջ փերեղակը չէ՞ միայն չունենք, այլև հրաժարութեց նախնային խնդիրը լսել, մօտ ծելով, թէ՛ սով է իմանում, զուցէ Գարանը մէկի հետ թշնամի էր ածելու, է նրան թունաւորել, սպանել, վերջըն էլ երեսնաբայցնեմ, թէ՛ մի պտուէց քեզ թոյնը, նա չէր Գարանը տեսնել թէ՛ փերեղակը բերեց, այն ժամանակ գային նրա օձիքից բռնէին, Այդ մտածելով փերեղակը դիպեց արտայայտութեամբ հեռացաւ Գարանը մնացածները թոյնի նա այդ ժամանակ մտածեց իրեն ջուրը՝ գցել սահկայն գիւղում ոչ միայն գետ չկար, այլ և խմելու ջուր հազիւ էր ճարւում։ Մնում էր Գարանի համար, որ գնար քերծի ծայրից իրեն ներքեւ գլորէր, կամ պատից ներքեւ դիպէր, և կամ թէ՛ կախուէր. սակայն քերծը հեռու էր, մնայր չէր թողնի նրան մենակ այն կողմը գնալու, իսկ երբ նայում էր իրենց պատից ներքեւ նրա գլուխը պտոյտ էր գալիս, սիրտը խառնում, սարսափը տիրում մարմին, միևնույն ժամանակ կասկած մի աներկոյթ ձեռք իրեն հարձակում պատի գլխից, չէր թողնում, մնում էր միայն ծածուկ գնալու կախուել, քայց չէր Գարանի համար այնքան ծանր էր, այնքան հեշտաբար, որ նա չզղարնէ ինքն իրեն վիզը գցելով՝ ժամերով ձգել մէջ կախուած էր միայն չաբջարոսելու։

— Ոչ, ոչ, ինչ որ լինելու է պիտի լինի, Աստծու իրեն կամքն է, քերծի տակ մըմում էր նա և նորից հաշտւում էր իր տանքախոյ գլուխեան հետ...
 Այսպիսով օրերն անցնելով իրար հետից կապում էին շարաթներ, շարաթներն ամիսներ, և հետզհետէ մոտենում էր Գարանի ծննդաբերութեան ժամը։

Բայց Մարութն արդէն հեռացել էր, և ճակատա-
կորդի վերջին խօսքերը համարիա չըլսեց։
Երկու խաղացողների մէջ տեղի ունեցած կռիւն
ոչ ոքի այնքան անհամ դրուժեան մէջ չըզրից, որքան
Մարգարին, նրան այնպէս թուաց, որ այդ կռիւնը սար-
քուեց յատկապէս նրա համար, որ առիթ ծնւայէր
գաղտնիքը դուրս հանելու, երկու կռուող-կողմերին ի-
շարհ հետ միացնելու, փնտռելու գտնելու այն յանցա-
ւորին, որ այդ ամենի բուն պատճառն է... և այն ժա-
մանակ Մարգարի համար կստեղծուէր մի խայտառակ
դրութիւն, աւելի խայտառակ, քան Մարութի համար։
Նրա սիրտն սկսեց ճմլուել, արագ-արագ բարձրակ
Մարգարին այդ րոպէին մտածեց որևէ պատճառ հնարեց
վեր կենալ, գնալ սակայն ենթադրելով, որ զրանով
կասկածի տեղիք կտար, աւելի լաւ համարեց մնալ։ Նա
պապիրոսը վատեց և սկսեց իրեն այնպէս ցոյց տալ,
որ իբր թէ ոչ մի ուշադրութիւն չի դարձնում տեղի
ունեցող խօսակցութեան վրայ, այլ լսում է ինչպէս
մի պատահական անձն։

— Մէկ տես գնաց, — լռութիւնը խզեց մի միջատի
գեղջուկ։

— Հա, գնաց, — դուռը քիչ բաց անելով դուրս նայ-
եց մի դեռահաս գիւղացի։

— Ոչ էս խօսք կը հասկանայ, ոչ էն քիչ մկաց
թէ մեզի էլ րաքի տակ տային։

— Թող թողնէիք, տեսնէիք ես նրան ինչ կանէի, —
խորխտ խօսեց կռուող երիտասարդը և շարժուեց դէպի
դուռը։

— Այ տղայ, չերթաք, էլի չկուտիք, — նկատեց նը-
րան նստողներից մէկը։

— Բայց կռուող երիտասարդն արդէն հեռացել էր։

— Չէ, Մարութն արդէն գնացել է, — դուրս նայեց

դուրս մօտ նստող գիւղացին, և նրանց հանգստացրեց։

— Էդ որ կըխօսեն տեսնիս շիտակ բան է, թէ
էնպէս... հարցրեց մի միջատի գիւղացի։

— Կնիկ-մարդու պանկելու օրերն են էս էլ նոր
կըհարցնէ, — վրայ բերեց խօսողներից մէկը։

Դարձեալ տիրեց փոքր լռութիւն։

— Գեղերիս մէջ մենակ էդ էր պակաս. էդ էլ ե-
ղաւ ամեն ինչ լմընցաւ, — ընդհատեց լռութիւնը մի
տարիքաւոր գիւղացի։

— Շիրտակ, գիտէք, մարդ որ լաւ կըմտածէ կատա-
րեալ ամօթ ու խայտառակութիւն է, — խօսեց մի երկ-
րորդը։

— Ուռուսէթ դառաւ մեր գեղը, Ուռուսէթ, — զա-
ւէշտի ժպիտը շրթունքին վրայ բերեց երրորդը։

— Էդ անտէրն էս տեսակ բան է, որ Ուռուսէթ
չդարձնէ, — յարեց չորրորդը և շարունակեց. — միւլատու-
սի պէս (մագնիս) իրեն կը քաշէ։

— Ով որ թեթեւ է կը քաշէ, համա ծանր մարդուն
չի կարող, — վրայ բերեց մեծ փափախաւոր գիւղացին։

Էլի տիրեց փոքր, հարցական բնոյթ ունեցող լը-
ռութիւն, որ շատերին խորհել էր տալիս, շատերին էլ
ղաւէշտի նիւթ որոնել։

Մարգարն տեսաւ, որ բոլորովին լուռ մնալ, ոչինչ
չասել չէր կարելի, գրանով առիթ կըտար մտածելու,
թէ «յանցաւորը սքլան կըլինի», ուստի հանդիսաւոր
կերպով դառաւ։

— Ես որ Մարութի տեղն ըլլիմ հրացանը կառնիմ,
էդ տեսակ մօրը կըծքին դէմ կուտամ ու տեղն ու տեղը
կվերջացնեմ, քան թէ սաղ կըթողնիմ, որ ողջ գեղը խօսի,
խայտառակ անէ, — ասաց և պապիրոսը տարաւ բերանը։

— Էդ տեսակ բան մեր հների ժամանակ որ ըլ-
կիր, խօսեց Նիկոն, — կըբռնէին, իշու վրայ թաքս կընըս-

տացնէին, պոչը սանձի տեղ ձեռքը կըտային, երեսին մուր կըքսէին, դառուլ զուռնէն առաջները գցած սաղ դեղի մէջ ման կածէին, պատահողին երեսին թքել կըտային, խաղկ ու խայտառակ կանէին, որ մէկ էլ չանէր, ուրիշներին էլ պատճառ չդառնար. համա, հիմի:

— Հիմի էլ կըլլի, հիմի էլ՝ համա անող չկայ:

— Դարը փոխուել է, չէք իմացել, ազատութիւն է, — զաւէշտով վրայ բերեց նախկին խօսողներից մէկը, — մեր կնիկ-մարդիկը լուսաւորուել են:

Տիրեց դարձեալ լուռութիւն, որից յետոյ մի միջատի գիւղացի հարցրեց.

— Հալա իմանաս, թէ էդ տղէն համէն է:

Խօսող գիւղացին հարցն այնպիսի ձևով տուեց, այնպիսի ակնարկով, որ կարծես Սարգսին իրեն ուղղուած լինէր, մանաւանդ որ հարցնելիս նրա աչքերի մէջ նայեց:

— Ով որ Մանասենց տուն կերթայ-կուգայ՝ նըրանից կըլլի, — դատեց մի հասակաւոր գեղջուկ:

Այդ խօսքի վրայ նստողներն իրար երեսին նայեցին, թէ արդեօք հիվ է նրանցից շատ Մանասենց տուն յաճախողը, և բնագդամբ նրանց մտքերը գնացին դէպի Սէյլանենց Սարգիսը, որ Մանասենց գրացին է, մանաւանդ որ գիտէին՝ ամենից շատ այնտեղ յաճախողը նա է. սակայն նրանք ոչինչ չասացին, այլ լուռ իրենց մտքերում խորհեցին:

Սարգսի մէջ վերստին ամեն ինչ իրար խառնուեց. կարծես այդ րոպէին մէկը այն է պատրաստուում էր նստողների միջից դուրս գալու, նրա փեշից բռնելու, առաջ քայլելու և բարձր բարձր բղաւելու՝ «ահա, ահա թէ ով է». Սարգսի վրայով մի սարսուռ անցաւ. նա այդ ծանր դրութեան մէջ պապիրոսը դարձեալ տարաւ բերանը, ամուր ձիգ տուեց և ծուխը

բարդ-բարդ դուրս թողնելով օդի մէջ, դէմքը ծածկեց նրա շերտերի տակ:

— Տեսա՞ր ինչպէս կարմրեց, — փսփսաց նստողներից մէկը իր մօտինի ականջին:

— Ինքն է ու կայ. սաղ գեղին յայտնի է, որ Մանասենց տուն ամբողջ օրը ընկածը նա է եղել:

— Տես ինչպէս էլ սքլաւ, — պատասխանեց միւսը:

— Փսփսոցը հասաւ մի երկար պեխերաւոր գիւղացու ականջին, որ Սարգսի մօտիկ անձն էր. նա ուզեց նախով խուլ խօսակցութեան առաջն առնել, դառաւ:

— Ումէն կուզէ ըլլի՝ մէկ բան չէ. տղամարդու համար ի՞նչ. հր մի տղամարդու կնիկ-մարդը կանչէ, որ չերթայ. տղամարդը էստեղ կանչէ, էնտեղ դուրս կըկանգնի, դուք կնիկ-մարդուն ասէք, որ արածը ցելի պէս վրէն կըկալչի. կնիկ-մարդը չպիտի անէ, — ասաց ու ձիգ տուեց իր երկար պեխերը:

— Թող չանեն՝ թող չըկալչի. գլուխները քարը, — կտրուկ կերպով վրայ բերեց մինչև այդ չխօսող մի գեղջուկ:

Եղպէս ասէք, է, էղպէս ասէք, որ խօսքի ծայրը ուրիշ կողմ գնայ, — մտքի մէջ մրմռաց Սարգիսը:

Տարիքաւոր, բարձրահասակ և մեծ փափախով գիւղացին, որ հեռուն լուռ նստած մինչ այդ շարունակ ականջ էր դնում, թէ ինչպէս էին դատապարտում յանցաւոր կնոջը և սպասում, թէ արդեօք կըլինէր մէկը, որ երկու խօսք էլ յանցանքի մասնակից տղամարդու հասցէին ասէր, և տեսնելով, որ ոչ ոք ոչինչ չասեց ու յիշելով այն բոլոր խօսակցութիւնը, որ կար գիւղում նստողներից մէկի հասցէին, էլ չըկարաց համբերել, հանդարտ եղանակով դառաւ:

— Դուք մենակ կնիկ-մարդուն բան կասէք, իսկի մէկդ չէք խօսի տղամարդու մասին. հապա մէկ միտք

արէք, թէ մեր տղամարդիկ ինչ են... էդ կնիկ-մարդը, որ էդ բանն արել է, հօ ինքն իրեն մենակ չէ արել, ախար հետը մի տղամարդ էլ է եղել. ասել է՝ թէ մեղքի կէսը կնիկ-մարդունն է, կէսն էլ տղամարդունն է, ինչի՞ մենակ մէկի մասին կըխօսիք, մէկէլի մասին ձէն չէք հանէ,—ասաց և նայեց նստողներին երեսին, աւելի շատ Սարգսի երեսին:

Մեծ փոփախաւոր գիւղացու այդ խօսքի վրայ, Սարգսի մէջ մի այնպիսի կատաղի միտք բռնկեց, մի այնպիսի բարկութիւն, որ նա այդ բոլորն պատրաստ էր վեր կենալու, նրա քթին-բերնին հասցնելու, որ մի անգամ վերջացած խօսակցութիւնը նորից վերսկսու՞մ է. նա հաղիւ կարողանալով իրեն զսպել, ատամներին արանքով դուրս թողեց. «շուն-շանորդի»:

—Տղէք, գիտէք ինչ կայ,—զարձեալ խօսքի մէջ ընկաւ երկար պիտերաւոր մարդը,—մեր քաւոր Սերգօն, որ քաղըէն կըգայ գեղ մեզ տունը, էդ տեսակ բանի համար գիտէք ինչ կասէ:

—Ի՞նչ,—հարց տուին մի երկու հոգի միասին:

—Կասէ, թէ մարդ հաստատ կարող է ասել, թէ իրեն մէրը ո՞վ է, համա հօրը մասին չի կարող հաստատ ասել, թէ հէ՞րն է. կասէ, մէկը ես, օրինակ, ինչ գիտեմ, թէ իմ հալալ հօրս որդին եմ թէ մի ուրիշի... հիմա էս է. ի՞նչ գիտէք, թէ էդ տղէն ումէն է. հէրը ո՞վ է:

—Ի հարկէ էդպէս է. համա թէ ինձի կըհարցնէք՝ ես էլի կնիկ-մարդուն կըմեղադրեմ, չունքի սատանութիւնը էլի նրա կողմէն է,—դառաւ մի միջատի դիւղացի.—անիծուած եւան չէր, որ խնձորը ծառէն վէր առաւ, ինքը կերաւ, յետոյ էլ Աղամին տուեց, թէ, «հա, կեր, տես ինչ համով բան է»:

—Համով քի համով,—ծափ դարկին մի երկու դեռատի գիւղացի և քրքրոցին:

—Էդ խնձորն է, է՛, էդ անտէր խնձորն է, որ աշխարքի տունը քանդել է,—իր կողմից վրայ բերեց մեծ փոփախաւոր գիւղացին:

—Համա ինչ կանես, որ ամեն ինչ էդ անտէր խնձորի գլուխն է,—յարեց երկար պիտերաւոր մարդը:

Տիրեց առ ժամանակ լռութիւն: Ինչ առաջ ամպի տակ մտնող արևի շողքերը, որ արդէն թեքուել էին արեւմուտքից դէպի արեւելք և թռել Նիկօի խանութի ձեղունի գերաններին՝ պայծառ կերպով նորից երևացին և յիշեցրին խօսողներին երկկոյանանալը:

—Արեգակն արդէն մէր մտնելու մօտիկ է. մալը հողալու ժամանակ է, գնանք:

—Գնանք, բաւականին խօրաթայ արինք:

—Ի՛հ, դատարկ խօրաթայ, օգո՛ւտը,—ձայնից մի տարիքաւոր գիւղացի և ելաւ ոտքի:

Այդ յայտարարութեան ու շարժումների վրայ Սարգսի ուսերի վրայից կասեա մի ահագին բնոն իջաւ ներքև. նա հողիւ ազատ շունչ քաշեց և վեր կենալով տեղից պատրաստուեց տուն գնալու:

Գիւղացիները գնացին:

Գնաց և Սարգիսը. բայց նրա այդ գնալը իր սովորական գնալուն նման չէր. այլ մի տեսակ փախստի, որ յանցանքից ազատուելու համար, շուտ հեռանար, տուն հասնէր, անախորժ խօսակցութիւնից իր օձիքը փրկէր. նա քայլում էր երկիւղով, շտապելով, որ չըլի-նի թէ յանկարծ խօսող մարդիկը հասնէին նրա ետևից, փողոցի մէջ խօսակցութիւնը վերստին նորոգէին, և այս անգամ պարզօրէն իր անունը տային ու խայտառակէին... Եւ այդ երկիւղը որքան զօրեղանում էր Սարգսի մէջ՝ այնքան էլ նա իր քայլերը արագացնում էր:

Բայց երբ նա հասաւ տուն, երբ անցան երկիւղի առաջին ծանր տպաւորութիւնները, երբ նա արդէն իրեն փրկուած զգաց վերահաս խայտառակութիւնից՝ սկսեց խորհել Գարանի մասին. սկզբից նա ինչ-որ անյայտ կրքից զայրանում էր. Գարանի դէմ, որ նա չէր կարողացել այդ բանը, ոչնչացնել, կամ թագցնել, որով և իրեն ևս խայտառակութիւն տաւ զառեւ, սակայն, քիչ յետոյ, երբ նրա յիշողութեան միջով անցկացան այն օրերը, երբ նա շարունակ հետամուտ էր լինում Գարանին, որպէս ուրուբը հաւի ձագերին, երբ խնդրում, համոզում, գրաւում էր դէպի ինքը և նրան հնազանդեցնում՝ Սարգսի մէջ թրւանում էին զայրոյթն ու կիրքը և տեղի տալիս կարեկցութեան և խանդաղատանքի. այդ բոլորն անցան մի ներքին ձայն նրան մեղմիկ և սրտամաշ կերպով ասում էր. «Ինչ արիւր դու, ինչ կործանեցիր մի խեղճ կնիկ-մարդու, մի թոյլ արարածի կեանքը՝ դրա հետ խորտակեցիր և քո անունը...» Գթութեան զգացմունքը իր բոլոր թափով պատում էր նրան և աչքերից զղջման արտասուք ծորեցնում։ Սարգիսն այդ բոլորն անտեսելով էր զգում իրեն վեր կենալու, գնալու Գարանի մօտ, նրա վզովն ընկնելու, առջևը չոքելու, լալու, արտասուելու, իր արածի համար ներողութիւն խնդրելու, մեղմ, գալու, որ դրանով իր յանցանքն ու նրա վիշտը քիչ թեթեւացնէր... սակայն միւս կողմից անուանարկութեան երկիւղը կապում կաշկանդում էր նրան և չէր թոյլ տալիս մի այդպիսի քայլ անելու... Եւ նա ծանր ու տանջող մտքերից հագիւ կարողանալով շունչ քաշել, պետոյտներ էր գործում սենեակի մէջ, մատերը փրար մէջ հիւսելով ձկրտացնում և պապիրոսի ծուխը ագահաբար կուտալով բարդ-բարդ թողնում օդի մէջ...

VI.

Կռուող երիտասարդի խօսքերը Մարութին կատարեալ խելքահան էին արել. Մարութը չիմացաւ, թէ այն բոլորն ինչ կատարուեց իր մէջ, միայն նրան այնպէս թուաց, թէ գետինը իր ոտքերի տակ շարժուեց և երկինքը վերեւից փռւել եկաւ իր գլխին, մի կատաղի յուզմունք, մի անզուսպ կիրք կատարելապէս պատեց նրան և ընդունակ դարձրեց ամենասոսկալի չարագործութիւն կատարելու. բայց այդ չարագործութիւնը հիմ դէմ. մօր, կռուող երիտասարդի, թէ այն անձի, որ իր մօրն այդ դրութեան է հասցրել... Բայց հիմ էր այն անպիկար անձը, այն սրիկան, որ այդ անպատուութիւնը բերել էր մօր գլխին... «Ո՞վ է արդեօք. Մինամը. ոչ, ոչ, նա այդ տեսակ մարդ չէ. Գրիգորը. չէ, նա մեր մօտաւոր ազգականն է. հայա՞ հիմ է. Սարգիսը. ոչ, նա հանգուցեալ հօրս ամենալաւ ընկերն է և մեր օջախի բարեկամը, մեր նեղ օրին հասնողը... Ուրեմն հիմ է»։ Եւ չգտնելով չարագործին՝ Մարութը պատրաստուում էր տուն գնալու, նախ մօրը նախատելու, յանդիմանելու, որ այդ տեսակ ամօթալի գործ էր կատարել և ապա ստիպմամբ իմանալու այն մարդու անունը, որ հօր օջախի գլխին այդպիսի խայտառակութիւն էր բերել... Սակայն՝ որդիական ակնածութիւնը՝ ոչնչացնում էր նրա մէջ համարձակութիւնը և նրան անգոր դարձնում այդ անելու... Մարութն ինչպէս յանդգնէր այդ տեսակ բան ասելու մօրը, այն մօրը, որ այժմ թէ հօր տեղ էր, և թէ մօր. նա մինչ օրս ամենեւին չէր համարձակուել նրան ասելու, թէ աչքիդ վերեւ յոնք կայ այժմ ինչպէս իրեն թոյլ տալ այդ տեսակ քայլ անելու։ Իսկ եթէ չասէր՝ ինչ անէր, ինչպէս տանէր այդ ծանր վիրաւորանքը, որ նրան հասցրին այնքան մարդու առաջ...

Ո՛հ, ո՛հ, այդպէս չի ըլլի, շնչաց նա և ձեռքերը փաթաթելով չէր քէզի փեշերի մէջ՝ անգիտակցաբար բռնեց դէպի հարկան գիւղը առնող ուղին. նա այդպիսով կասեա ուզում էր իր գլուխն առնել, հեռանալ և լինքն էլ չգիտէր՝ ո՛ւր...

Երեկոյեան մայր մտնող արեւն արդէն բոլորովին կորցրել էր իր շերմութիւնը, սառնամանիքը զգալի էր, բայց Մարութն այդ ցրտութիւնը չէր զգում, այնքան էր կատաղութիւնից տաքացել նա: Նա գնում էր արագ քայլերով և քթի տակ մըմուռն էր: Յէս ինչ բան էր, հա. էս ինչ բան էր, որ ես լսեցի, երկնքէն գլխի քար ընկնի մեռնէի, հազաբ հեղ լաւ էր, քան կենդանի մնայի ու էս տեսակ խօսքեր լսէի... Նոյն մէրս, ուրիշի հէա, հօրս մահուանից յետոյ, էն է. էն տեսակ հօր, որ գիւղի մէջ մէկ հատ էր... Ա՛խ, մէկ իմանայի թէ որ շուշշանդորդու հետ է ընկել, քնայի բլէն բռնէի, տակս արնէի, խեղդէի, վրէժս լուծէի... Համա ինչ անեմ, որ չգիտեմ... Հիմա ինչ անեմ, բոլորովին թողնիմ, հեռանամ, թէ վերադառնամ տուն տանը ինչ որ կայ-չկայ՝ բոլորը ջարդեմ, փշրեմ, վերջացնեմ...

Բայց այդ րոպէին Մարութն պատկերահունւմ է մայրը կասէս նա գալիս կանգնում է նրա հանդէպ իր մեղմ, մայրական գորովալի դէմքով: Մարութի կաները թուրանում են... Եւ ինչ պէտք ինչ տար այդ կերպ վարուելու, վերջապէս գոցեց սուտ է, հնարովի, թէն նա վերջերս նկատել էր մօր մարմնի հաստութիւնը, կողորութիւնը: «Բայց գուցէ այդ ներանից է, որ վերջերս միշտ շալ է առնում վրան ուսկի ըի ցաւելու պատճառով, և, վերջապէս, գուցէ յղի էլ է այդ հօրիցն է, բայց հօրը մեռնելը ութ-իննը ամիս է, իսկ սա... գուցէ»... և անորոշութեան մէջ մնալով նա

այրուած սրտով մըմուռն. «Ա՛հ, ինչ անեմ, ինչպէս իմանամ, թէ ինչը ինչոց է, ումէն է»...

Այդ րոպէին նա դիմացը նայեց և նկատեց, որ արդէն մօտեցել էր հարկան գիւղին, և արեւն արդէն մայր էր մտել: Ճուրան առել էր նրա մարմինը: Մի րոպէ Մարութը վհեց գիշերն. անցկացնել հարկան գիւղում, իրենց ազգականի տանը, բայց նրանց տուն գնալու համար էլ մի առիթ էր հարկաւոր. ասենք առիթ էլ գտնէր, բայց եթէ յանկարծ ազգականն իմացած լինէր իր մօր յղի լինելը և մի այսպիսի հարց տար՝ «Մարութ ջան, չիտմի է, որ հօրդ մահուանից յետոյ մէրդ յղի է մնացել»: ինչ պատասխան տար, ինչ ասէր, թէ «այո, յղի է»: Բայց եթէ այդպէս չէր, կամ եթէ այդպէս էր, ու որդեբերութիւնը փշնար, այն ժամանակ... Ո՛հ, էլի աւելի լաւ էր ետ դառնար, մոռն գնար, քան այդ տեսակ հարցութիւններն ինքնաբերական... Ու նա ետ դարձաւ տուն:

Ճրագներն արդէն վառել էին, որ նա մտաւ իրենց տուն և ուղղակի օդիմեց թոնրատան անկիւնը, որպէս ինքը պատկում էր քնելու և պահանջեց անկողին գցել:

— Ողջ օրը ծրտեղ խո, ո՛չ մալին եկար նայելու, ո՛չ էլ յաղորէն ջուր բերիր, բոլորը պստի աղպէրդ, Տիգրանը կատարեց. ախր նա ինչ կարող է, դեռ մի մատ երեխայ է:

Մարութին վայրկենապէս մի կատաղի կիրք պատեց, արդար դայրոյթի կիրք, որ փոխանակ ինքը քննելու, հարցնելու մօրը թէ այդ ինչ է արածդ, այդ ինչ խայտառակութիւն է կատարածդ, որի մասին ողջ գիւղում խօսում են, այդ ինչ ես բերել հօրս օջախի գլխին, ընդհակառակը նա—մայրն էր իրեն հարցնում, յաջողութեամբ իր ուշ տուն գալու համար:

—Հա, մինչև հիմա հրտեղ էիր, —հարցը կրկնեց մայրը։

—Ձհար ու ճհանլամը. այժմ որտեղ էիր, —բարձր և կրքոտ արտասանեց Մարուքը ու խէթ-խէթ նայեց մօր երեսը։

—Ի՞նչ է եղել քեզ, հիւանդ հօջիս, որ առանց հաց ուտելու կը պառկիս քնելու։

—Չէ, ես հիւանդ չեմ, ես...

—Հապա ի՞նչ է եղել, ինչի՞ համար ես բարկացել։

—Ինքդ ինձէն լաւ գիտես, թէ ինչի... այս անգամ կատաղած մոնչաց Մարուքը և նայեց մօր կողմը հաստացած իրանին, ապա յանկարծ փղձկտաց և ըսկսեց բարձր-բարձր լալ։

—Ի՞նչ եղաւ, ինչի՞ ես լալիս, —որդու յոգնած լացից կասկածելով հարցրեց մայրը։

—Էդ ի՞նչ ես բերել հօրս օջախի գլուխը, ի՞նչ... ողջ գեղը կը խօսի։

Այլևս կասկած չկար, որ որդին Մարուքը—ամեն ինչ գիտէր. ամօթի մի ուժգին ալիք տուեց Գարանի երեսը, բայց նա ուզենալով ցրել որդու կասկածը՝ իբրև թէ ոչինչ չի հասկանում, դառաւ։

—Ի՞նչ եմ բերել հօրդ օջախի գլուխը, որ խօսին...

—Ամօթ, խայտառակութիւն, —հեծկլտալով հազիւ արտասանեց Մարուքը։

Պառաւ մայրը, որ քուրսու տակ նստած տաքանում էր՝ լսելով մօր և որդու խօսակցութիւնը, գլխի ընկաւ բանն ինչու՞ն է, ճարպիկ կատուի նման տեղից վեր ցատկեց ու դիմեց դէպի դուռը։

—Ի՞նչ ամօթ, ի՞նչ խայտառակութիւն, ի՞նչ խելքէդ դուրս կը տաս...

—Ես գիտեմ, ես ամեն ինչ իմացել եմ...

Գարանը մեկուսի քաշուեց և ամբողջ մարմնով

դողդողալով սկսեց դիտել տատի և թոռան կռիւը։

—Ի՞նչ գիտես, ապա։

—Ամեն բան ինձ ասել են։

—Ի՞նչ են ասել։

—Ասել են, որ մէրս հօրս մեռնելէն ետեւ ուրիշից տղայ ունի...

Այդ ամեն ինչ բաց ու որոշ ասող խօսքերը ինչպէս կայծակ շանթեցին Գարանին. նա մի սուր ճիչ արձակեց, ընկաւ քուրսու վրայ և վանչեց. Վոլ, քուրսանամ ես, էս ի՞նչ կըլսեմ...

—Դէ, գիտես, մուստաւ, հերիք դրսի սուտ ու մուտ խօսքերին հաւատաս ու գաս մօրդ վիրաւորական խօսքեր ասես։

—Հա, դու ասա սո՛ւտ է...

—Սուտ չէ, հապա ի՞նչ է. դա թշնամու խօսք է. էդ տեսակ բան չկայ, —յողթական ձայնով վրայ բերեց պառպւը, —միւս անգամ չհամարձակիս էդ տեսակ խօսքեր ասել մօրդ. դուրսը շատ բան կը հաշնձնեմ ամեն բանի. պիտի հաւատամ. ինձի համար էլ հնարել էին, թէ պիտի պսակուեմ. պսակուեմ, դժբ է, հա...

—Մարուքը կէս համոզուած, կէս յողթուած պառաւ տատի խօսքերից ու մօր զայրոյթով լի ճից, լըռեց, —մտաւ տեղաշոր և ինքն իրեն շնջաց. «չլինի սուտ է, հա. չլինի էն Ալէքի լակոտը դիտմամբ ասաց, որ ինձ անպատուէ... լմաւ ասենք էդ սուտ է, հապա մօրս հաստութիւնը... ու քաշելով վերմակը գլխին տեղաշորի մէջ սկսեց շարունակ շուռ ու մուռ գալ։

Պառաւ մայրը կրքով ու զայրոյթով լեցուն դնաց դէպի աղջիկը և հազիւ լսելի ձայնով թոռնաւոր շնջաց։

—Հիմի իմացմը ուր հասցրեց կերած ապուրդ...

—Գարանն այդ ծանր նախատինքի առաջ բոլո՛ւ

րովին իջին կորցրած՝ հեծապալան կռիւ եկաւ քուրսով տակ, գլուխը կոխեց կարպետից ներս, և խաբու խեղդող ձայնով սկսեց լալ ու հառաչներ արձարել:

VII

Բարեկենդանի վերջին շաբաթն էր՝ ֆեւրըմբ ըսկոսել էր սովորական կեանքը. մի տեղ յանձնարիչ միւս տեղ նշանդէք, երրորդ տեղ պար ու երգ, չորրորդ տեղ հեքիաթ ու խաղ, դրսում մական, ձիարշաւ, օդանկրում կիր ու խոմս:

Ախաբազա Գարանի որդիքը նոր էին մալր հոգացել—կեր տուել, որ նա մէջքին մի ստեր, կարծես կախ ընկած ցաւ դգաց. ցաւը քանի՞ զնաց դառաւ աւելի ու աւելի անտանելի. այդ ցաւը Գարանի մարմնի վերեւ մասից սկսելով հեռիցեպէ իջնում էր ներքեւ մասերը և նրան նեղում, ճնշում, ասարանիկ սրտը թեան հասցնում, ու այդ դրութիւնից դուրս քաշու հաճար, ճանապարհ որոնում: Գարանի օրտն տիկնի էր խոնուելը. նա նստած տեղիւն շարունակ օրօրում էր և ձեռքերով իր կշտերը, ցաւած տեղերը բռնում, սեղմում... Սակայն խորը, բոնելն ու սեղմելը չէր օգնում. մի ներքին պարտերով էր բռնկել Գարանի մէջ մի ցաւոտ, փափուկ, որ բաժանուելով միայն փայտէր, վերջանալ:

Մայրն էր նկատեց Գարանի կրած ցաւերը հարցրեց.

— Աղբէն:

— Այո, — հազիւ լսելի ձայնով ձգեց Գարանը և որանից յետոյ կարծես դգում էր պեղծաբանի կանչի, սակայն երգ չէր երգ, պա անգամայն փոքրեւորութիւնը այն սովորական որդեգրութիւններից չէ:

այլ օրէնքից դուրս ինչ որ բան, պահունի լոնց, եղբակացնելով, որ ինչպէս որ պահունի է, այնպէս էլ պահունի ժողովարհ է դալու:

— Պառաւ մայրը գնաց գոմ, թոռներին ուղարկեց գործի, պատուիրելով որ այդ օրը մինչև երեկոյ տուն չըգան:

Փոքրը՝ Տիգրանն առանց մի բառ արտասանելու ելաւ դուրս:

Մարութը դժգոհ արտայայտութեամբ դառաւ դէպի տանք ու խօսեց.

— Ի՞նչպէս թէ մինչև երեկուն տուն չըգանք, ինչի...

— Գործ կայ, — չոր պատասխանեց մայրը:

— Ի՞նչ գործ:

— Գործ ինչ, ամեն բան պիտի լմանա:

— Ես ամեն ինչ գիտեմ. ինձի երեսայի տեղ մի դնիր, գիտեմ ինչի համար է մեղ անէն հեռացնել:

— Որ գիտես՝ էլ ինչ, — դուռը ցոյց տուեց պառաւը:

— Ես գիտեմ ինչ... սպանիր դու, — յօտորդաց Մարութը:

Երբ գիտցած դէտրոյ հիմի ժամանակը չէ, կը հպկանան:

— Ախ, մէր, մէր, — աղաղակեց Մարութը և ելաւ դուրս:

Պառաւ փակեց դուռը մտաւ թոնրատուն, և աղջկան տարաւ գոմի օդան:

Ամեն անգամ երբ Մանասնեց տանը որդեգրուեթիւն էր լինում, իսկոյն շրթը էին տաքացնում, պատրաստութիւններ էին արեւում, որ նորածին մանկան լուսնային յիստակէին. սակայն այս անգամ այդ բանը տեղի չունեցաւ. պառաւն այդ մասին չմտածեց:

անդամ. իսկ Գարանն իրեն տանջող երկունքի հետ էր. նա նստած տեղում անդադար օրօրում էր աջ ու ձախ և կողքերը սեղմում: «Վայ» — մէկ էլ յանկարծ ճչաց նա, երբ զգաց, որ իր մէջ ինչ-որ բան կտրուեց. ու ճնշումը դէպի ներքևի մասերը սաստկացաւ:

— Արդէն, — դունչը աղջկայ երեսին մօտեցնելով հարցրեց պառաւը:

— Այո, — թոյլ կերպով հաղիւ ձայնեց Գարանը. և ինթարկուեց մօր կարգադրութեան...

Բոլէնները ծանր էին, ցաւերն անհնարին. Գարանի ներսում կասես փթելով բան ինչէր գետեղուած, որ թէ ծանրութեամբ և թէ ծաւալով սոսկալի տանջանք էր առաջ բերում և այդ տանջանքը քանի մօտենում էր իր վախճանին՝ այնքան աւելի անտանելի և անհնարին էր դառնում... կանացի ճիչը, կանչը, լացը, կոծը, կսկիծը, հառաչը, արտասուքը, շղային կծկումները գոմի օդայի նեղ ու ցածր կամարների տակ իրար էին խառնուել:

— Լմւ, լմւ, համբերէ, քիչ էլ համբերէ՛ հիմի, — ասում էր մայրը և գլուխը ներքև քաշ արած շարունակում էր իր աշխատանքը...

— Վայ, — մէկ էլ յանկարծ մատերը ջարդելով և ատամները կրճատեցնելով ճչաց Գարանը և իսկոյն լըռեց, թուլացած, անզօր դառած այլ ևս ձայն հանել: Նա սկսեց միմիայն սարսուղ ու դողդողալ:

— Պրծաւ, — ձայնեց մայրը, և նորածին մանկան մի կողմ դնելով, առ ժամանակ աղջկան նստեցրեց օդայի սաղրին:

Գարանը թեք ընկնելով կիսամաշ կեղտոտ բարձին՝ թէև թոյլ, բայց մի անուշ հանգիստ զգաց, երբ նրա մարմինն ազատուեց ինչը ամիս կենդանի նախատինք դառած ծանր բեռից:

— Օհ, — մի թոյլ հառաչ քաշեց նա և հանդած աչքերն ուղղեց դէպի մայրը: Գարանն այդ ժամանակ տեսաւ, թէ ինչպէս պառաւը վերցրեց փոքրիկ, դեռ հաղիւ վերջաւորութիւնները շարժող մսի կտորը, որ արդէն մարդու պատկեր էր կրում, ինչպէս ձեռը տարաւ նրա կողորդը, ինչպէս բութ մատով ճնշեց նորածնի կզակի տակ, ինչպէս մանուկը այդ ճնշումից իր ձեռքերն ու ոտքերը մի-երկու անգամ թափահարեց, ինչպէս հաղիւ լսելի ձայնով թոյլ խոխոտց արձակեց և ինչպէս պառաւի ձեռքերում մնաց անշնչացած միայն մի փափուկ մսի կտոր... Դիակի ձեռքերն ու ոտքերը իսկոյն կախ ընկան և սկսեցին օդի մէջ տատանուել — երերալ... պառաւը շարժուեց դէպի գոմի մի անկիւնը, մանկան դին դրեց կեղտոտ սալաքարերի վրայ, վերցրեց նախապէս պատրաստած բահը և սկսեց մսուրի տակը փորել: Գարանը թեք ընկած տեղից կարողանում էր նկատել, թէ ինչպէս պառաւ մայրն իր բոլոր ճիգերն էի մի հաւաքած նախ մի սալաքար կարողացաւ տեղից հանել, մի կողմ շրջել, ապա շտապ-շտապ գետինը փորել, հողը դուրս ածել, գերեզման պատրաստել. և երբ սև փոսն արդէն պատրաստ էր՝ նա բահը գցեց գետին, երեսի քրտինքը թևով սրբելով մօտեցաւ դիակին, վերցրեց այն և, քթի տակ ինչ որ մըթմըթալով, որ յայտնի չէր Գարանին, աղօթք էր թէ անէծք, տարաւ գցեց փոսի մէջ, ապա արագ-արագ հողն ածեց նրա վրայ:

Գարանը կիսախաւարի մէջ պարզ տեսնում էր այն բլրակը, որ գոյանում էր մսուրի առաջ (պատի տակ). պառաւը բահի մի քանի հարուածով այդ բլրակը տափակացրեց, ապա ելնելով նրա վրայ՝ սկսեց կոխտել, հետն էլ տնքտնքալ, որով կարծես իր ծանրութիւնն ուզում էր աւելացնել... Նւ երբ հողը բաւա-

կանին նստեց, պառաւը նրանից մի քանի բահ աղբի շեղջի վրայ շարտեց, ապա տեղից հանած սալաքարը նորից շուռ տուեց իր նախկին տեղը:

Սալաքարի շրջուելու հետ միաժամանակ ինչ-որ տարօրինակ ձայն հարաւ Գարանի ականջին, մի ճկըտոց, որ ոսկորների փշրուելու ձայն կասես լինէր... այդ ձայնին անմիջապէս հետեւեց մի ստորերկրեայ հառաչ, մի նվոց, որ դեպնի տակից դուրս սողալով՝ սալաքարածուծ էր օդի մէջ, հասնում մարդկանց ականջին... դա վերջին հառաչն էր, վերջին ճիչը մահական, այն մահական, որն իբրեւ գալարուած օձ իննը ամիս նստել էր նրա՝ Գարանի արգանդում լույնը համար, որ ծանր երկղունքի պատճառ դառնար և իրեն արաք աշխարհում խայտառակէր...

Այժմ այդ մահական հեռանալով—կորսուելով հեռանում և անհետ կորչում էր ամեն ինչ և նախատինք, և անուանարկուծիւն, և ամբի, և բամբասանք... Այժմ Գարանը ազատուած ամեն բանից դարձեալ կրդառնար այն առաջուայ պատուաւոր գեղջիկին, նախկին անբիծ մայրը...

Պառաւն արնոտ ձեւերով բարձրացրեց աղջկան թեք ընկած տեղից, թևից բռնեց և նեցուկ տալով նրան տարաւ թոնրատուն, այնտեղ պառկացրեց տաք քուրսու մօտ առաջուայ պատրաստած տեղաշորում: Նա լաւ փաթաթեց աղջկան, տաք թէյ խմացրեց, որ առաջուց դրել էր թոնդիր, և նրա կողքին նստեց:

Գարանը ներքին մրմուռացնող ցաւերից հեռոնհատ հոնգատանալով, թմրեց, նիրհեց և աչքերը փակելով հանգիստ քնեց:

Հինգ-վեց երկար ամիսներ տանջանքներով լի գիշերներ անցկացնելուց յետոյ դա առաջին անգամն էր, որ նա խաղաղուած անուշ քնում էր:

Անցան ժամեր:

Դրսի դուռը թակեցին:

Պառաւ մայրը վեր թաւ տեղից, շտապեց դուռը բաց անելու:

Չարհուրելի դէմքով ներս մտաւ Մարութը, և ուղղակի դիմեց ներս:

Պառաւը հազիւ հետեւեց նրան:

Մարութը մտնելով թոնրատուն, կրք տեսաւ մօրը քուրսու տակ տեղաշորով պառկած, մի դառն քրքիջ արձակեց:

—Սրտ համար տնէն դուրս կը դրկէիր. հա, պառաւ:

—Ի՞նչ կը վախչես, — թողան կրկին պիտի գնայիս ինչու կանչեց պառաւը:

—Դեռ կը հացցնես ի՞նչ կը խօսիս: Ո՞ր է, հըր է էն շնէն եղած լակոտը, որ եղբայրս աչքիս ձեռքերովս խեղդեմ, — կանչեց ու մօտեցաւ մօր տեղաշորին:

—Սղւ. քնած է:

—Ո՞վ շան լակոտը:

—Ձէ, մէլդ. լակոտ չկայ:

—Հապա հըր է լակոտը, — կանչելով մօր վերակէլ մի մաքր ետ տարաւ Մարութը:

Գարանը լանկաբծ պարթեց և նրա նուազած թոյլ հայեացքը հանդիպեց Մարութի կատաղի հայեացքին:

Այդ հայեացքները թէև ընդամենը մի վայրկեան հանդիպեցին իրար, սակայն շատ բան ասացին մէկ-մէկու:

—Ո՞ր է, պառ, — գլուխը կատաղած եղան պէս թափաբելով կանչեց Մարութը:

—Ձկայ, չկա. քեզի կտան չկայ, — թոռանը մի կողմ հրելով, աղջկան ծածկեց պառաւը:

— Չկայ. լաւ. ասինք լակոտը չկայ. հապա թրտեղ է էն մարդը, որ էդ չքացած լակոտի հէլն է, հմ. հո նա կմայ. ասան, հմ է, — կատաղի մոնչաց Մարութը:

Գարանը ամօթից ու պատկառանքից թուլացած, որ որդին իրեն այդ դրութեան մէջէ վրայ հասնում և առանց քաշուելու ամեն ինչ ասում-խօսում, անգոր դառաւ որեւէ պատասխան տալու:

— Քեզ կը հարցնեմ, ասան, հմ է էն շունը, որ հօրս օջախի գլխին էս խայտառակութիւնն է բերել, որ ողջ գեղը իմացել է, ամենքը մեզի թուք ու մուր կուտան:

— Չգիտեմ, չգիտեմ, — հազիւ շնչաց Գարանը:

— Իո՞ւ որ չգիտես հապա էլ հմ կարող է գիտեալ:

— Քա հերիք եղաւ. ինչ ես կատաղել, շուն կըտրել, — ուզեց թողան թւից քաշել դէն շարտի պատուը:

— Էն կողմը կեցիր, պառնաւ. թէ չէ էն որ պիտի գայ էն աննամուս մարդու գլխին՝ քու գլուխդ կուգայ, — ու տատին շարտեց իրանից մի քանի քայլ հեռու:

Արցունքն ու յուպահատութիւնը ամօթի դառն նշաւակի հետ խեղդեցին Գարանին, և նրա լեզուն գրեթէ բերանում բռնուեց:

— Չէս ասէ. էն ժամանակ ամեն ինչ քու գլուխդ կը թափեմ, մէր, երթում կուտեմ. հօրս գերեզմանով, որ չեմ խնայէ:

Ապագայ գալիք հճրագործութիւնը Սարգսի գլխին՝ Գարանին այդ ընդհանր ծանր թուաց, այնպէս խղճալի, միևնոյն ժամանակ իր բերանով նրա անունը տալը այնպէս ամօթալի, որ նա լաւ համարեց մեռնել, քան իր լեզուով դեռահաս որդուն ասել, թէ հւմ հետ է յանցանք գործել. Գարանն այդ ծանր խոր-

հըրդածութիւնների մէջ որդու նախաձեռնների տակ հազիւ կարողացաւ արտասանել.

— Կուգե՛մ գնալ, սպանէ, չեմ կարող...

Պառաւ մայրը, որ այդ ժամանակ դարձեալ մօտ էր եկել, նորից թողան թւից քաշեց ու կանչեց.

— Կը տեսնիր, որ չի կարող. էլ ի՞նչ հոգէս հրեշտակի պէս եկել ես բկին չոքել, ու չես թողնի, որ հանդիստ պառնի:

— Լաւ, թէ դու քու պատիւը կորցրած աղջկանդ կը խղճաս, պառնաւ, էն ժամանակ դու կիմանաս, թէ հմ է եղել էն նամարդը, որ...

— Չգիտեմ, ինչ նամարդ, ես ի՞նչ գիտեմ...

— Սուտ կխօսես, պառնաւ. — կատաղի աղաղակեց Մարութը. — անկարելի է, որ դու չիմանաս, քանի որ ամեն ինչ քու ձեռովդ անց կացաւ. ասան, թէ չէ շան պէս կը խեղդեմ քեզ էլ, մօրս էլ. ես մէր ու ժամ չը գիտեմ. ես ամօթուց մեռայ. մէկ դուրս ել, տես ա-կանջդ ինչեր կիմանայ. սաղ գեղը Մանասեց. Գարանի տղայ ունենալը կը խօսի...

Պառաւ այդ վայրկեանին նայեց թողան երեսին և տեսաւ, թէ ինչ աստիճանի զարհուրելի ու անարկու էր դառել նա. այդ ընդհանր Մարութի դէմքը կարմրել, սևացել էր, աչքերը արիւնով լցուել, քթի ծակերը լայնանում-նեղանում էին, իսկ ներքին ծնօտը կատաղութիւնից դողում էր:

— Որ ասեմ՝ կարող ես հախէն գալ, էնքան տղա մարդութիւն ունի՞ս, — մի տեսակ վրէժխնդիր ոգով արտասանեց պառնաւ:

— Անք. էն ես գիտեմ...

— Սարգիսն է, Սէյլանեց. Սարգիսը. հիմի իմացմը. դէ, քեզի տեսնեմ...

— Սարգիսը. նամ, հօրս ամենամօտիկ ընկերը.

Դեռ... մէկ, որ կը խօսին լապելէ ստալէն, Եղիշ... իսկ
 ևս որքան միամիտ եմ եղել, որքան անմեղ, որ նրան
 մեր տանը համարեալ ամեն օր խոսել եմ, բայց
 ամենիմէս չեմ կրնալածել, թէ Մարգինէն տեսակ բան...
 ասաց զժինչպէս կատաղած նոր դուրս վազեցի իմ
 ... Գառաբը հազիւ հանգստացաւ, մինչև անգամ խն-
 դութիւն զգաց, որ Մարտիը զնայէն շուն քովակից
 վրէժ առնելու, զէն որ ամեն ինչ պարտկուեց, հիմի
 ինչ կուզէ թող անէ՛ք, մըթմըթաց նա և մօտեցաւ
 աղջկայ տեղաշորին։

Իրաւ հրա սնարի վերեւ, ինչպէս թռչունը իր ճագիրի վերեւ:

պառաւ մայրը, կարծելով, թէ աղջկայ կանչը չոր ցաւերից է, որ տեղի է ունենում շատ անգամ ծննդկան կնոջ:

— Մայրիկ:

— Ի՞նչ է:

— Դժու ես:

— Հա, ի՞նչ է, ասա, ի՞նչ եղաւ, ես եմ:

Գարանն ուզում էր ասել. «ախր ինչո՞ւ Մարութին ասացիր. այդ ի՞նչ արիր դու. դրանով իմ խայտառակութեամբ արար աշխարհքը լցրիր... մանկանս խեղդուելը, անծէս գերեզման իջնելն անգամ չօգնեց նախատինքից ազատուելու»:

Բայց նա անկարող եղաւ այդ ասելու. նրա աչքերը լցուեցին արտասուքով, կոկորդը ճնշուեց և նա դառն կերպով սկսեց հեկեկալ ու մրմուռ:

— Չայ կուզե՞ս, էլի կայ:

— Չէ, — թոյլ ձայնով խօսեց նա:

— Ուտելու բան:

— Ոչինչ չեմ ուզէ:

— Ապա ախր մի բան...

Գարանն ուզում էր մի բան ասել, բայց դարձեալ հեկեկաց, դարձեալ արտասուքը խեղդեց նրան. դարձեալ ընկաւ նորանոր ցնորքների ու մտածմունքների մէջ: Գարանի գլուխն ու երեսը ծածկուած էին կրկնակի շալերով. նա այդ հաստ շալերի տակ երկար երկար հեծկտաց ու ցնցուեց, երբ յիշեց. Մարութի ձայնը, մանկան ոչնչանալը... Յանկարծ նրա յիշողութեան մէջ պատկերացաւ այն ըոպէն, երբ իր մայրը բռնի մատով ճնշեց նորածին մանկան կոկորդը, երբ մանուկը թոյլ խրխուրդ արձակեց, ապա մահուան ձեռքից ազատուելու համար իր անոյժ ոտքերն ու ձեռքերը մի բանի անգամ կծկեց ու շարժեց, և յետոյ լռեց

յաւիտենական լուսթեամբ ու հանգաւ... և ինչպէս մի անպէտք իր անկարեկից կերպով դուռեց գոմի կոյտոս սալաքարերին... ինչպէս մայրը, քթի տակ մի բան մըթմըթալով, անփոյթ կերպով շարտեց մահուան. նրման բերանը բաց արած սեփոսը, ինչպէս անմաքուր հողը ածեց նրա վրայ, ապա ինչպէս բարձրացաւ բըլրակի վրայ ու տնքտնքալով սկսեց կոխողել... ու յետոյ ինչպէս սալաքարը շուռ տուեց գերեզմանի վրայ, ինչպէս սալաքարի շուռ գալու հետ լսուեց մանկան ոսկորների փշրուելու ձայնը, այդ ձայնի հետ և նրա վերջին ճիչը, նվոցը... և ինչպէս անմեղ զաւակը յաւիտեանս ծածկուեց հարազատ մօր աչքերից...

— Խեղճ բալէս. ախար ինչո՞ւ համար, ինչո՞ւ:

— Հա, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ կրկանչես:

— Մեղքը, մեղքը:

— Ի՞նչ մեղք:

— Երեսխ մեղքը:

— Էր մեղք չկայ. մեղքը պարտկուեց, վերջացաւ, —

աղջկայ խօսքերի միտքը հասկանալով ուզեց ընդհատել պառաւ մայրը:

— Պարտկուեց, վերջացաւ, — դառն կսկիծով հեգնեց Գարանը, — էն էլ խեղդելով, անծէս թաղուելով... Օ, օ, մէրիկ, էդ ի՞նչ արիր դու. միթէ կարելի է ադամորդու դաւակին խեղդել, գոմի կեղտոտ անկիւնում թաղել... չէ՞ որ մեղք է, անսերելի մեղք:

— Աղամորդու զաւակին անծէս թաղելը շիտակ է, մեղք է. բայց ա՜մ մեղք չէ, քանի որ աղամորդու հալալ զաւակ չէ, այլ ապօրինի, չար, հարամ զաւակ:

— Միթէ զաւակը զաւակ չէ, մէրիկ, միթէ հոգին հոգի չէ, էդ ի՞նչ կասես:

— Իհարկէ՛ մեղքով ծնած զաւակն ու օրինաւոր հօրից եղած զաւակը մէկ չեն:

պառաւ մայրը, կարծելով, թէ աղջկայ կանչը չոր ցաւերից է, որ տեղի է ունենում շատ անգամ ծննդկան կնոջ:

— Մայրիկ:

— Ի՞նչ է:

— Դձու ես:

— Հա, ի՞նչ է, ասա, ի՞նչ եղաւ, ես եմ:

Գարանն ուզում էր ասել. «Ես ինչո՞ւ Մարութին ասացիր. այդ ի՞նչ արեիր դու. դրանով իմ խայտառակութեամբ արարաշխարհքը լցրիր... մանկանս խեղդուելը, անծէս գերեզման իջնելն անգամ չօգնեց նախատինքից ազատուելու»:

Բայց նա անկարող եղաւ այդ ասելու. նրա աչքերը լցուեցին արտասուքով, կողորդ ճնշուեց և նա դառն կերպով սկսեց հեկեկալ ու մրմուռլ:

— Չայ կուզես, էլի կայ:

— Չէ, — թոյլ ձայնով խօսեց նա:

— Ուտելու բան:

— Ոչինչ չեմ ուզէ:

— Ապա ախր մի բան...

Գարանն ուզում էր մի բան ասել, բայց դարձեալ հեկեկաց, դարձեալ արտասուքը խեղդեց նրան. դարձեալ ընկաւ նորանոր ցնորքների ու մտածմունքների մէջ. Գարանի գլուխն ու երեսը ծածկուած էին կրկնակի շաւերով. նա այդ հաստ շաւերի տակ երկար-երկար հեծկտաց ու ցնցուեց, երբ յիշեց Մարութի ձայնը, մանկան ոչնչանալը... Յանկարծ նրա յիշողութեան մէջ պատկերացաւ այն ըոպէն, երբ իր մայրը բռն լսատով ճնշեց նորածին մանկան կողորդը, երբ մանուկը թոյլ խրխուոց արձակեց, ապա մանուկան ձեռքից ազատուելու համար իր անոյժ ոտքերն ու ձեռքերը մի բանի անգամ կծկեց ու շարժեց և յետոյ լռեց

յաւիտենական լուսթեամբ ու հանգաւ... և ինչպէս մի անպէտք իր անկարեկից կերպով դրուեց գոմի կոյտոս սալաքարերին... ինչպէս մայրը, քթի տակ մի բան մըթմըթալով, անփոյթ կերպով շարժեց մահուան նըման բերանը բաց արած սեփոսը, ինչպէս անմաքուր հողը ածեց նրա վրայ, ապա ինչպէս բարձրացաւ բլրակի վրայ ու տնքտնքալով սկսեց կոխուել... ու յետոյ ինչպէս սալաքարը շուռ տուեց գերեզմանի վրայ, ինչպէս սալաքարի շուռ դալու հետ լսուեց մանկան ոսկորների փշուրուելու ձայնը, այդ ձայնի հետ և նրա վերջին ճիչը, նվոցը... և ինչպէս անմեղ զաւակը յաւիտեանս ծածկուեց հարազատ մօր աչքերից...

— Խեղճ բալէս, ախար ինչո՞ւ համար, ինչո՞ւ:

— Հա, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ կրկանչես:

— Մեղքը, մեղքը:

— Ի՞նչ մեղք:

— Երեխիս մեղքը:

— Էլ մեղք չկայ, մեղքը պարտուեց, վերջացաւ: — աղջկայ խօսքերի միտքը հասկանալով ուզեց ընդհատել պառաւ մայրը:

— Պարտուեց, վերջացաւ, — դառն կսկիծով հեգնեց Գարանը, էն էլ խեղդելով, անծէս թաղուելով... Օօ, մէրիկ, էդ ի՞նչ արեիր դու. միթէ կարելի է ադամորդու զաւակին խեղդել, գոմի կեղտոտ անկիւնում թաղել... չէ՞ որ մեղք է, անսերելի մեղք:

— Աղամորդու զաւակին անծէս թաղելը շիտակ է, մեղք է. բայց սա մեղք չէ, քանի որ աղամորդու հալալ զաւակ է, այլ ապօրինի, չար, հարամ զաւակ:

— Միթէ զաւակը զաւակ չէ, մէրիկ, միթէ հոգին հոգի չէ, էդ ի՞նչ կասես:

— Իհարկէ՛, մեղքով ծնած զաւակն ու օրինաւոր հօրից եղած զաւակը մէկ չեն:

— Մօր համար մէկ են, մէկ... —

— Ըլլի որ մօր համար մէկ ըլլի, համա Աստծու համար մէկ չեն։ Դու էղքան անդը լաւ չըգիտեալս երբ որ վեր կենաս՝ հարցրու Տէր-Մկրտիչ հօրը, նա քեզի կասէ, հիմի հանդիստ պառկի։

— Տէր-Մկրտիչ հէրը թող ասէ... մէկ են, մէկ... — մեղմ վերջացրեց Գարանը և նորից մտապատկերեց անմեղ մանկան խեղդուելը, անմաքուր գերեզմանի մէջ անծէս թաղուելը, ոսկորների կրճատւելը, նվոյը, վերջին ճիշը, որ շարունակ հասնում էր նրա ականջին և ուղեղին այրում... դէպի յաւիտենականութիւն՝ գնալը... Գարանն այդ ծանր, այրող մտածմունքներից շարք երևից քիչ հեռու տարաւ։

Պառաւ մայրը ծածկեց աղջկայ ուսը, որ չըմբսէ, նայեց նրա աչքերին, որոնք ինչ որ տարօրինակ արտայայտութեամբ նայում էին բաց երգի միջով դէպի երկինք։

Այդ կապոյտ երկինքը, ուր, ըստ Տէր-Մկրտիչ հօր պատճի, Աստծու աթոռն էր դրած՝ սոսկալի թուաց Գարանին. նա այլևս չէր համարձակուում բաց ճակատով նրան նայել, ինչ որ երկիւղ, յանցանք կարծես նրան կաշկանդում էր ու արգելում... Գարանը բաւական չէ, որ մի յանցանք գործել էր սրանից ինչը ամիս առաջ, մի յանցանք էլ գործեց այժմ, մի քանի ժամ առաջ, որ սոսկալի անցեալի շարունակութիւնն է. բայց նա այս անգամ գործել էր աւելի զարհուրելի, աւելի մեղսալի կերպով, քան առաջին անգամ, այն է՝ ոչ իր անձի, այլ մի ուրիշ անձի վերաբերմամբ, որը դրանում ոչ մեղք ունէր, ոչ առիթ։

«Ես, մայրս, իմ ցանկութեան պատճառով երեխայ ունենամ և այդ երեխային, որ ոչ մի բանով մեղաւոր չէ իմ կատարածի համար, թողնեմ, որ սպա-

նեն, անծէս թաղեն դոմի կեղտերի մէջ... Ես, մայրս... մնա, ծանր հառաչեց նա և ձեռքերն ուղեց տարածել աջ ու ձախ, սակայն նպառաւ մայրը, որ նրա տեղաշորի մօտ նստած էր, թոյլ չըտուեց, և աւելի պնդացրեց վերմակի արկերը։

Գարանն այդ ճնշման տակ նայեց մօր երեսին. այդ բոպէին մօր դէմքը նրան այն աստիճան դաժան թուաց, այն աստիճան զգուելի, որ նա անկարող եղաւ երկար նայել նրան. նա այդ բոպէին պատրաստ էր կանչելու, բարկանալու մօր վրայ, հայհոյելու, անպատուելու, մինչև իսկ տանից դուրս վաճառելու նրան, որ իրանից եղած հարազատ, անմեղ մանկանը դաճիճի պէս խեղդեց արնոտ ձեռքերով և շարտեց կեղտոտ փոսի մէջ... Սակայն յիշելով այն բոլոր անուանարկիչ հանգամանքները, իր մենակութիւնը՝ զսպեց իրեն, լոց և դարձեալ սուգուեց դառն խոհերի ու ցնցող ցնորքների մէջ... նա այդ ժամանակ ուզում էր քնել, որպէսզի ազատուէր իրեն ճնշող ծանր մտքերից, սակայն, բունը նրա աչքերից հեռու էր փախչում. քնի փոխանակ մանկան անծէս, կեղտոտ գերեզմանն էր ուռճանում նրա աչքերի առաջ. ահա սալաքարը, ահագին ժայռի նման, շուռ է գալիս քնքոյշ մանկան կրծքին, քարի տակից ճկրտոց լսում, նվոյ գալիս... սրտաճմլիկ ճիչ է գալիս... բայց ահա գերեզմանի սալաքարը նորից ետ է շրջւում, հողը պատուում է, փոսի միջից գլուխը հանում է մանուկը, գերեզմանից դուրս գալիս, կենդանանում. նրա դէմքը ընդունում է ինչ որ այլանդակ կերպարանք. նա զարհուրելի աչքերով նայում է մօր երեսին, որ իրեն սպանել է տուել, յարձակուում է իր երկար մատներով մօր կոկորդից բռնելու, խեղդելու, նրա ճիւղները կարծես խրոնում են Գարանի մարմնի մէջ, նրա այլանդակ դէմքի մա-

հացու շունչը իր պաղ ալիքներով հասնում է Գարանի երեսին. նա փարուում է մօր վզով և այնտեղ էլ ոչնչանում, դիակ դառած մնում, ինչպէս մղձաւանջ, և խեղդում մօրը...

Գարանն ուզեց բղաւել, օգնութեան կանչել՝ ձայնը չհնազանդուեց նրան, նա իր ձեռքերն ուզեց շարժել սառած դիակը իր վրայից հեռացնելով՝ բայց ձեռքերը հաշմացել էին, չէին շարժուում... Գարանը շնչասպառ վեր թռաւ կէս-քուն դրութիւնից և հրկիւղախառը մի յուսահատ ճիչ արձակեց:

— Յիսուս ու Քրիստոս, ի՞նչ եղաւ, — հարցրեց պառաւ մայրը, որ պզգած մնացել էր աղջկայ գլխավերեւ:

— Նա, նա...

— Ո՞վ:

— Նա ի՞նքն... փոխուած, այլակերպ...

— Ոչինչ չկայ. մի վախենայ. հանգստացիր. ես էստեղ եմ, — պատասխանեց մայրը և ծածկեց դստեր ուսերն ու գլուխը ու խաչակնքելով իր երեսը՝ քթի տակ երկմար աղօթքներ մրմնջաց...

VIII.

Արդէն գիշեր էր. ձմեռուայ խօլ-խաւար գիշեր, որ իր սև թևերով գիտէ ծանրանալ երկրի վրայ, ևս առաւել գիւղի վրայ:

Գարանի մայրը պառկել էր քուրսու տակ, միւս կողմը, աղջկայ հանգէպ, ճրագը վառ էր թողել, լուցկին էլ դրել իր գլխի վերեւ:

Գարանը որքան աշխատել էր մոռացութեան տալ կատարուած դառն իրականութիւնը, իր մտքից հանել այն, ազատուել ծանր և ճնշող մտապատկերներից՝ սակայն իզո՛ւր, մտապատկերները քանի գնացել այնքան

աւելի սաստկացել ու զօրացել էին, մինչև խակութեան հասել և նրա աչքից քունն ու հանգիստը խել: Գարանը թէև ծածկուած էր կրկնակի վերմակներով ու կարպետով, սակայն նրա մարմինն արդէն սկսել էր մրսել, դողդողալ, սիրտն ուժգին բաբախել, ցնցումները յաճախակի սկսել էին կրկնուել և նա այդ ամենի մէջ հազիւ էր կարողանում շունչ քաշել, ապրել... շարունակ Բըշ-Բըշը, շարունակ մանուկը, շարունակ մօր արնոտ ձեռքերը, վերջապէս, կատաղած Մարուքը, որ այնպէս կատաղած էլ դուրս վազեց և ամբողջ գիւղը իր դէմ կատաղեցրեց... Ահա, ահա իրենք գիւղացիները կանչով ու ճիչով, աղմուկով ու աղաղակով, հարայ-հրոցով, թրերով ու սրերով, հայհոյանքով ու անէծքով գալիս են դէպի ինքը, գալիս են թքելու, մրհելու, իրենց տանը հաստ սիւնին կապելու ու խայտառակ անելու արար աշխարհքի առաջ, որ այդ տեսակ անամօթ գործ է կատարել, վերջը՝ վերջն էլ երեխան խեղդել, կեղտոտ հողում անձէս թաղել... արձակում են նրան սիւնից սրբիբաղան անելու... ահա մոխրագոյն շինէլներով սաղաւթները, ահա դապախները ձիերը հեծած, թուր ու թուանքը ձեռքներին... ահա երկինքը վերեւից ժայթքում, փուլ է գալիս իր գլխին, որոտում, հարուածում, ահա նա ինքը — Գարանը — ուժասպառ վայր է ընկնում...

Օ՛հ, — մի այրող ոգոց քաշեց նա, ետ հրեց երեսից շալերը, թևերը պարզեց, հազիւ դէմքը հովացրեց և պարզ լսեց մօր, Մարուքի ու Տիգրանի մէկիկ-մէկիկ շնչառութիւններն ու խոկոցները, այնքան խաղաղ, այնքան հանգիստ, այնքան անուշ ու այնքան խորը...

Գարանը թեքուեց մի կողքի վրայ, ետ հրեց կրկնակի վերմակներն ու կարպետը, կամացուկ վեր կացաւ տեղաշորից, զգոյշ-անձայն քայլերով ոտաբորիկ

մօտեցաւ սիւնին, ճրագն տուաւ ձեռը և կամացուկ հլաւ դուրս:

Կէս գիշերն արդէն անցել էր. պառաւ մայրը յանկարծ քնից զարթնեց և տեսաւ, որ տան մէջ մթուօթիւն է տիրում:

— Վե՛հ, ձուներ զլխո՛ւս, ճրագը մարել է, տեսար դու քանը, միջի ձէթը հատած կըլլի,— ինքն իրեն խօսեց նա և վառելով լուցկին մօտեցաւ ճրագի տեղին, որ տանէր ձէթ լցնէր, սակայն որքան եղաւ նրա դարմանքը, երբ ճրագն իր տեղում չըգտաւ. նա շուտ և կաւ դէպի Գարանի տեղաշորը և նկատեց, որ աղջիկը անկողնում չկար. վառեց երկրորդ լուցկին և թոնրատնից դուրս դնաց աղջկայ ետեից, ենթադրելով, որ նա բնական կարիք է ունեցել չէ ուզեցել իրեն—պառաւին—նեղութիւն պատճառել, տեղաշորից վեր է կացել, գնացել դուրս:

— Գարան, աղջի Գարան, ռըտեղ ես, ձէն հանէ,— բաւ դուրս գալով ձայնեց պառաւը:

Սակայն նրա ձայնին պատասխան չկար:

— Ո՛ւր է գնացել էդ աղջիկը էս ցրտին, ինքը տողոցկան... Զըլլի՛ չարերը տարան. Յիսո՛ւս ու Քրիստո՛ս, չարերը տողոցկնի հակառակ կըլլին. նշխարք էլ դրի գլխի տակը, մեռնիմ զօրքին— երեսը խաչակնքելով դէպի գոմ ուղղուեց պառաւը: Նա բացեց գոմի դուռը, նայեց ներս և տեսաւ, որ այնտեղ կրակ կար:

— Հա՛, էստեղ է, որ ճրագը վառ է,— դարձեալ ինքն իրեն խօսեց նա և կանչեց.

— Գարան, ռըտեղ ես, չես երկայ. ձէն հանէ մենակ ինչի՞ ես եկել:

Պառաւի հարցին դարձեալ պատասխան չկար: Զըլլի՛ ուշքը գնացել է, մի տեղ վեր է ընկել, մնացել, կամ, հեռի իրանից, սատանաները բռնել տարել են,— նորից շնջաց նա և առաջ շարժուեց դէպի սիւնից կախ արած ճրագը. այստեղ նա նայեց չորս կողմը և տեսաւ, որ հեռուն, միւս սիւնի հետ, գետնից քիչ բարձր կանգնած է մի սպիտակ բան, իսկ նրա ոտքերի մօտ յարդի դատարկ փոքրիկ քթոցը:

— Աղջի, էստեղ ի՞նչ կանես, ինչի՞ ինձի ձէն չտուիր, որ հետդ գայի,— խօսելով սպիտակ բանին մօտեցաւ պառաւ մայրը և յանկարծ ի՞նչ տեսաւ. Գարանը առաստաղից կախ ընկած, գլուխը ծռած դէպի ձախ, երեսը դէպի վեր թէք ցցած իր դուրս ընկած երկար լեզուով, որի արմատը հաղիւ էր պարունակւում բաց մնացած բերանի մէջ և սաստիկ մեծ բացուած դուրս ընկած աչքերով, որոնք ինչ որ մահացու, քարացած հայեացքով նայում էին դէպի վեր... Նրա փոքրինչ վեր քաշուած շապիկը հաղիւ հասնում էր մինչև ծնկները, որից ներքև իրարից բաժան կախ էին ընկել նրա մերկ ոտքերը...

Պառաւի վրայով մի մահուան սարսուռ անցաւ. նա ինքն իրեն կորցրած հաղիւ երեսը շրջեց դէպի դուռը դուրս փախչելու, որ յանկարծ լսեց զանգերի արագ-արագ, իրար չետևող զօղանջ. կոչնակաների ձայնն աւելի շփոթեցրեց նրան. նա չգիտէր այդ տարածամին ի՞նչ զօղանջ էր, որ հասնում էր նրա ականջին. լուսացե՛լ էր, և Տէր-Մկրտիչն էր, որ այդպէս ուժգին հնչեցնում էր զանգերը, թէ՛ իրեն ականջին էր ձայն գալիս չար ուղիններից, որոնք խեղդուածի շուրջն էին բուրուած... Նա վեր նայեց երդկին, հաւաստիանալու՝ չառագունե՛լ է արդէն... և ի՞նչ տեսաւ. այդ բոլորին

երկինքը ընդունել էր բոսորային գոյն. նա խելագարութեան չափ սարսափեց, վերագրելով այդ ամենը երկընքի վրէժխնդրութեան...

Բոլոր ոյժերը նա 'ի մի հաւաքեց և դուրս վազեց բակ. նա հազիւ էր հասել բակի դռան, որ տեսաւ դուրսը ահագին լոյս, բոցավառութիւն: Պառաւը խելագարուած դրութեամբ փողոց վազեց և սարսափահար տեսաւ գիւղի ծայրին հազարաւոր բոցեր իրենց երկար ու կարմիր լեզուներով կասես իրար շուրջ բազ բռնած լուսաւորում են ամբողջ գիւղը. այդ բոցերի առջև մարդիկ ինչպէս ստուերներ խառնիխուռն վազվզում էին. շատերն էլ կրակի հետ էին կուռում: Մարդկանց աղաղակը, ճիչը, կանչը, գոռոցը, բղաւոցը, զանգերի արագ-արագ զօղանջը՝ ամենը իրար խառնուած մի զրփոխք էին դարձրել գիշերը... Պառաւը աղէ արձան դարձած նայում էր այդ երևոյթին և չէր իմանում, թէ ինչ է կատարւում իր աչքի առջև:

Այդ բոպէին գտակը ետ քաշած, իրեսը սև մրի մէջ կորած, օձիքը բացուած, հեիհե վազելով յանկարծ նրա առջև կանգնեց Մարութը:

Հազիւ հաւատալով իր տեսածին, պառաւը քիչ ուշքի գալով հարցրեց.

— Մարութ, էդ դժւ ես:

— Հա, ես եմ:

— Էդ ի՞նչ զանգի ձէն է, էդ ի՞նչ լուս է:

— Հրդեհ է, հրդեհ. ժամկոչը հաւարով զանգերը կըտայ, որ գիւղացիները օգնութեան հասնեն:

— Ի՞նչ կըվառի:

— Սէյլանենց Մարգարի խոտի դէզերը:

— Սէյլանենց Մարգարի, ո՞վ է վառել:

— Ես վառեցի, ես, — պարծանքով ձայնեց Մարութը և մտաւ ներս:

Պառաւը մոլար քայլերով թուան ետեից շարժուեց ներս, չիմանալով, թէ ինչպէս տան մէջ կատարւածը պատմէր-բացատրէր, հասկացնէր Մարութին:



— Եւ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—

Եւ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—

Եւ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—

Եւ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—
 յառ զմեզ առ խղճմանդսն — Եւ յիշեալսն սի—

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՐԱՆ

№ 1. Չարարաստիկ թուղթը, Ստ. Տէր-Աւե-	8
տիքեան	
№ 2. Նահապետական տուն, Մովսէս Ղու-	5
կասեանց	

ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

1. «Հանրային մատենադարան»-ի համար ընդուն-
 ւում են ինքնուրոյն և թարգմանական գեղարուեստա-
 կան գրուածքներ:
2. Իւրաքանչիւր գրուածք ցանկալի է, որ մօտա-
 ւորապէս 3 տպագրական թերթ (96 երես) լինի ամ-
 սագրի դիրքով:
3. Նիւթեր ուղարկողը պարտաւոր է յայտնել թէ
 այդ նիւթերից ձրն է տպուած, երբ և ձրն և ձրն է
 նրանցից անտիպ:
4. Թարգմանութիւնների հետ պէտք է ուղարկել
 նաև ընագիրները:
5. Խմբագրութիւնը իրաւունք է վերապահում ի-
 րան կարևոր դէպքում սրբագրել ընդունուած նիւթի
 լեզուն:
6. Ուղարկուած նիւթերը պէտք է լինեն մաքուր
 և պարզ գրուած, մի երեսի վրայ և յուսանգոնեցում:

ԲԱՅՈՒԱԾ Է

„ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ“

ամսագրի 1913 թուի բաժանորդագրութիւնը

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ամսագիրը լոյս է տեսնում Ընկերութեանս խմբագրական Մասնաժողովի խմբագրութեամբ և Ընկերութեանս հրատարակութեամբ:

Մատենադարանը կրպարունակի քարգմանական եւ ինքնուրոյն գրուածքներ հետեւեալ ծրագրով.

1. Վէպեր, վէպիկներ, պատմութեան և գիտութեան տական ուրիշ գրութեանքներ.— 2. Թատերակ. գրութեանքներ.— 3. Երգիծաբանական երկեր.— 4. Այլ և այլք.— 5. Յայտարարութիւններ:

Իւրաքանչիւր համար լինելու է ամբողջական գրութեան և բաղկացած մօտ 96 երեսից Ընկերութեանս հրատարակութիւնների գիրքով:

Թաժնէգինն է

Տարեկան	.	.	.	1 ա. 80 կ.
Արտաս. Տարեկան	.	.	.	5½ ֆր.—

Բաժանորդ գրուել կարելի է Թիֆլիզում՝ Ընկերութեանս գրասենեակում, Бебутовская, 25 և բոլոր հայ գրավաճառանոցներում: Դաւաններում՝ Ընկերութեանս տեղական ճիւղերի, աշխատակից-անդամների և տեղական գրավաճառների մօտ:

Պատասխանատու խմբ. Իսահակ Յարութիւնեան